



27(420)
16.09.2015

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԻՐ

Lusarar

ԱԳՐԱՐԱՅԻՆԻ ՇՈՒՇԻԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐԸ ՆՇԵՑ ԻՐ ՆՈՐԱՄՈՒՏԸ

ԼՂՀ հռչակման 24-րդ տարեդարձը նշանավորվեց հիրավի պատմական մի իրադարձությամբ. Շուշիում իր դռները բացեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մասնաճյուղը: Շուշիում կրթական հաստատության բացումը բոլորովին այլ խորհուրդ ու նշանակություն ունի, քանզի ազերական լծի տասնյակ տարիների ընթացքում այստեղ հայկական կրթօջախները միայն փակվում էին, իրականացվում էր սպիտակ եղեռն: Առհասարակ, Արցախում յուրաքանչյուր ուսումնական հաստատություն սոսկ կրթական շենք չէ, այլ ազգապահպանման դարբնոց:

Մասնաճյուղի նորանուխն ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Արցախի բեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, պետական այրեր Հայաստանից ու Արցախից, հյուրեր Սփյուռքից ու արտերկրից:

Հանդիսավոր միջոցառումը ողջունի խոսքով բացեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Արշալույս Թարվերդյանը: «Քաջածանոթ լինելով տարածաշրջանի կրթական հաստատությունների շենքային պայմաններին ու հնարավորություններին՝ վստահաբար կարելի է ասել, որ այս համալսարանը լավագույններից մեկն է»,- ասաց նա: Մասնաճյուղը բոլոր հնարավորություններն ունի պատրաստելու ագրոպարենային համակարգի համար միջազգային չափանիշներին համապատասխան բարձրորակ կադրեր և ի վիճակի կլինի լուծել համակարգի առջև ծառայած խնդիրները:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Շուշիի մասնաճյուղի նոր հոյակերտ շենքի բացման առթիվ ուսանողներին, դասախոսներին և Արցախի ապագայով մտահոգ բոլորին շնորհավորեց ու երկու հանրապետությունների ղեկավարներին շնորհակալություն հայտնեց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանը: «Այսօր մեկ անգամ ևս հաստատվում է հայկական երկու պետությունների կառավարությունների՝ տարիներ առաջ սկսած մի ծրագրի հաջողությունը, որի նպատակն է նպաստել Արցախի գիտակրթական գործընթացի կայացմանն ու զարգացմանը, առավելապես խթանել Արցախում գյուղատնտեսությունը, ապահովել ոլորտը բարձրակարգ և մրցունակ մասնագետներով, զարկ տալ գյուղատնտեսական մթերքների որակին ու աճին: Եվ տեսնում ենք, որ թեև անելիքները դեռ շատ են, բայց կատարված ներդրումները հիրավի ծառայել են նպատակին»,- ասաց նա: Ընդամենը մի քանի տարիների ընթացքում, շնորհիվ մայր բուհի հետևողական աջատանքի, ԼՂՀ կառավարության աջակցության, ՀՀ և ԼՂՀ կրթագիտական գերատեսչությունների սերտ համագործակցության՝ մասնաճյուղն իր արժանի տեղը գրավեց արցախյան բուհական դաշտում՝ դառնալով ագրարային ոլորտի մասնագետներ պատրաստող միակ և դինամիկ զարգացող բուհը: Նախարարը հանդգնեց է, որ մասնաճյուղը տեղափոխելով Շուշի՝ գոլտրիկ նորակառույց թաղամաս, որտեղ գտնվում են Եզնիկ Մոզանի անվան արհեստագործական ուսումնարանը և Դա-

միել Դագարյանի անվան երաժշտական մասնագիտացված հանրակրթական դպրոցը, ապագայում կունենան նաև մարզական համապատասխան կառույցներ ու հանգստյան պուրակներ, հանրակացարան, կրթամշակութային այլ կառույցներ: Դրանով փաստորեն դրվում է նաև ուսանողական ավանի ստեղծման հիմքը, նշեց նախարարը: Նոր շենքն իր լուսավոր և ընդարձակ լսարաններով, ժամանակակից լաբորատորիաներով, անտարակույս, նոր լիցք կհաղորդի կրթական գործին, նոր



այլն: Նախարարն այս ամենին հավելեց երկու հայկական պետությունների ղեկավարների աջակցությամբ Արաքսի ափին համատեղ ուսանողական ճամբարը, որի շինարարական աշխատանքներն ավարտվելու վրա են, և որը նպաստելու է ուսանողների հանգստի, փորձուսուցման, ինչպես նաև այդ տարածաշրջանի գյուղատնտեսական աշխատանքներին:

Նա հանդգնեց հայտնեց, որ ոչ հեռու ապագայում արդեն կարելի կլինի խոսել Շուշիի մասնաճյուղի գիտական նորարարությունների ու միջազգային ասպարեզում ձեռքբերումների մասին, քանզի գրեթե առկա են բոլոր նպաստավոր պայմանները՝ մասնաճյուղն իսկական գիտական օջախի վերածելու, իսկ հետագայում՝ նրա հիմքի վրա տարածաշրջանային բարձրակարգ համալսարան ունենալու:

«Շուշիի մասնաճյուղը իրաշալի հնարավորություն է՝ համախմբելու հայ գիտակրթական ներուժը և այս հենքով մոտ ապագայում ստեղծելու համազգային համալսարան եվրոպական բարձրագույն կրթական տարածքում»,- ասաց ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

«Մեր պատերազմը հենց այսօրվա արյունքի համար էր, նախկին հմայքն ու փայլն է ետ բերում մեր հիմնավորը Շուշին: Եվ վստահ եմ, որ մեր տղաների թափած արյունն այսօր ուրախությամբ, ցնծությամբ ճշում է առ երկինք՝ փառաբանելով Աստծուն, ուրախանա-



շունչ ու որակ՝ յուրովի նպաստելով հիմնավորը Շուշիի երբեմնի փառքի վերականգնմանը: Ս. Ասրյանը շեշտեց նաև Արցախի և մայր հայրենիքի բուհերի սերտ համագործակցությունը. համախափ են հրավիրվում համատեղ գիտաժողովներ, տարաբնույթ հավաքներ, դասախոսություններ, կազմակերպվում ճամբարներ և Դա-



լով մեզ հետ միասին, որովհետև հայոց աշխարհը պտղաբերուն է»,- հոգևոր հայրերի հետ աղոթքով օրհնեց կրթական այս հաստատությունը Պարզև Սրբազանը:

Հարագատ բուհին ուսանողի ամենալավ նվերը լավ սովորելն է, գիտելիքների հարուստ պաշար կուտակելը. այս գիտակցումով ամբիոնին մոտեցավ ուսանողուհի Հերմինե Սարգսյանը. «Այս օրը, հիրավի, ոչ միայն անցածը վերագնահատելու, վերաիմաստավորելու առիթ է, այլև պարտավորեցնում է բոլորիս ապագայի համղեպ լցվել վառ հավատով ու վստահությամբ: Խոստանում ենք գնալ դեպի ամենագոր գիտելիքը, բաց անել ճանաչողության սահմաններն ընդարձակող բոլոր դռները, զինվել գիտելիքներով, հոգեպես և մտավոր առունով զարգանալ հարստանալու և մեր լուսավոր ապագան կերտելու վեհ նպատակով: Խոստանում ենք չլքել մեր հայրենիքը, մնալ և մասնակցել նրա շենքացմանն ու բարգավաճմանը»:

Ի դեպ, մասնաճյուղի տնօրեն Վահրան Հայրապետյանը հենց նրա հետ կորեց համալսարանի բացումն ազդարարող կարմիր ժապավենը:

Նույն օրը Արցախի ու Հայաստանի նախագահները պետական այրերի և հյուրերի ուղեկցությամբ այցելեցին Եզնիկ Մոզանի անվան արհեստագործական ուսումնարանի շինհարթակ և ծանոթացան այնտեղ ընթացող աշխատանքներին: Նախագահ Բ. Սահակյանը կարևորեց նման կրթական հաստատությունների գործունեությունն ինչպես որակյալ մասնագետների պատրաստման, այնպես էլ Շուշիի շենքացման ու զարգացման տեսանկյունից:

Բարձրաստիճան հյուրերը մասնակցեցին նաև Ստեփանակերտում «Թուն» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի բացման հանդիսավոր արարողությանը:

ԼՂՀ Նախագահը նշեց, որ նման կենտրոնի գործունեությունը նոր որակ կհաղորդի Արցախում երիտասարդների շրջանում մտավոր ներուժի զարգացմանը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման գործընթացին:

Երկրի ղեկավարը երախտագիտություն է հայտնել Հայ բարեգործական ընդհանուր միությանը, «Սիմոնյան» հիմնադրամին և «Ղարաբաղ Տեխնո» ընկերությանը՝ հայրենանվեր այս նախաձեռնությունն իրականացնելու համար՝ նշելով, որ դա մեր հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման գործուն լավագույն ներդրումներից է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԸՆԹԱՅ

ՀԵՌԱԶԱՐ ՆՊԱՏԱԿԸ՝ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Այս տարի Արցախի Հանրապետության հռչակման օրը կրկնակի հիշարժան էր Շուշիի համար: Անկախ ու ինքնիշխան Արցախում՝ Շուշիում, օրերս իր նորամուտը նշեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մասնաճյուղը: Այդ առթիվ մենք զրուցեցինք ՀԱԱՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշալույս ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ հետ:

- Պարոն Թարվերդյան, ի՞նչ նպատակ էր հետապնդում Ստեփանակերտում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնաճյուղի բացումը տարիներ առաջ: Ի՞նչ առաքելություն է այն կատարել:

- Լեռնային Ղարաբաղի, ինչպես և Հայաստանի Հանրապետություններում ագրոպարենային ոլորտը հայտարարված է գերակա ուղղություն: Այն հատկապես վերջին տարիներին ձեռք է բերել կայուն զարգացման միտում: Այդ են վկայում ոլորտի աճի ցուցանիշները վերջին 10 տարիների ընթացքում: Գյուղատնտեսության ոլորտում համախառն արտադրանքի ծավալներն ավելացել են շուրջ 3 անգամ:

Առավել տպավորիչ են գյուղատնտեսության զարգացման հայեցակարգում և ծրագրերում նշված ցուցանիշները. առաջիկա 5-10 տարիների ընթացքում նախատեսվում է գյուղատնտեսական մթերքների ծավալների ավելացում 2-4 անգամ: Ընդ որում, հիմնական շեշտադրումը ոչ միայն ինքնաբավության ապահովումն է, այլև արտահանման ծավալների կտրուկ աճը:

Ջարգացման ծրագրերն ըստ ճյուղերի հավակնոտ են, բայց և իրատեսական, որովհետև առկա են բոլոր անհրաժեշտ

նախադրյալները դրանց իրականացման համար: Ինքնին հասկանալի է, որ այդ ծրագրերը կարող են իրականացվել միայն համապատասխան որակավորմամբ կադրերի առկայության պայմաններում: Ժամանակի հրամայական էր դարձել աշխատաշուկայի արդի պահանջները բավարարող, մրցունակ կադրերի պատրաստումը տեղում Արցախում: Այսօր ոլորտի կադրային ապահովվածության հիմնախնդրի լուծման պատասխանատվությունը դրված է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Շուշիի մասնաճյուղի վրա: Մասնաճյուղը հիմնադրվել է ՀՀ և ԼՂՀ կառավարությունների որոշումներով 2008թ. օգոստոսին, սկսել է գործել 2009թ. փետրվարից Ստեփանակերտում

Հիմնադրման պահին մասնաճյուղը կրթական երկու համակարգերում ուներ 860 ուսանող և սովորող, դասավանդում էր 80 դասախոս: Այսօր մասնաճյուղն ունի շուրջ 1500 ուսանող և սովորող, 100-ից ավելի դասախոս:

Անցած 6 տարիների ընթացքում մասնաճյուղը տվել է 1690 շրջանավարտ, որից՝ 573 բակալավր, 138 մագիստրոս և 980 միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետ:

Անցած տարիներին մասնաճյուղի հա-

մար պատրաստվել են գիտության 14 թեկնածու և 2 դոկտոր, գործընթացը շարունակական է:

- Իսկ ինչո՞վ է պայմանավորված մասնաճյուղը Շուշի տեղափոխելը:

- Հարյուրամյակներ շարունակ Շուշին եղել է հայ մշակույթի, կրթության, արվեստների կենտրոն, մեծ դեր է խաղացել հոգևոր արժեքների պահպանման ու ժառանգորդման ասպարեզում: Անկախության նվաճումից հետո անհրաժեշտ էր, որ Շուշին վերագտնի երբեմնի փայլն ու դերը:

Շուշիում բարձրագույն կրթության զարգացման հիմքն է դրվում, իրականացվում է կրթության գործին մեր երախտավորների՝ Պետրոս Շամշյանի, Պերճ Պռոշյանի, Ղազարոս Աղայանի, Մուրացանի, Լեոյի և շատ ուրիշների երազանքը:

Ուշագրավ է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիում գործող 10 դպրոցների, և հատկապես հայոց հոգևոր թեմական, Օրիորդաց և Ռեալական ուսումնարանների աշակերտները դպրոցական համակարգի բարեփոխման իրենց ծրագիր-առաջարկի 1-ին կետում շուրջ 150 տարի առաջ նշել են հետևյալ պահանջը՝ դպրոցները դասել պետականների շարքը՝ տալով համալսարան ընդունվելու հնարավորություն:

Այսօր սա ոչ միայն իրականություն է, այլև համալսարան կարելի է ընդունվել հենց Շուշիում: Այստեղ համալսարան ունենալը երազանք էր ոչ միայն 100-150, այլ նաև 5-6 տարի առաջ: Այն իրականության դարձավ շնորհիվ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի բարձր հովանավորության և աջակցության: Սա լավագույն հուշակոթողն է բոլոր նրանց հիշատակի, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի ազատագրության վեհ գործին:

Քաջածանոթ լինելով տարածաշրջանի կրթական հաստատությունների շենքային պայմաններին ու հնարավորություններին՝ վստահաբար կարելի է ասել, որ այսօր այս համալսարանը լավագույններից մեկն է:

Օգտվելով առիթից՝ նշեմ, որ մասնաճյուղի հիմնադրման հենց սկզբից մայր

բուհը՝ ագրարային համալսարանը, մեծ աջակցություն է ցուցաբերել և առաջիկայում էլ ցուցաբերելու է ինչպես նյութատեխնիկական բազայի, այնպես էլ կրթության բովանդակության հարցերում:

- Մասնաճյուղի հետ կապված հետազոտի՞նչ ծրագրեր կան:

- Համալսարանը հետևողական է մասնաճյուղի կահավորման, լաբորատոր բազայի ամրապնդման ու նորացման ծրագրերի իրականացման հարցերում: Շուտով Հաղորթի տարածաշրջանի ցածրադիր գոտում շահագործման կհանձնվի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունը, որը հզոր բազա կդառնա նաև Շուշիի մասնաճյուղի համար:

Մենք շատ լավ ենք հասկանում, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, մասնավորապես Շուշիի մասնաճյուղի վրա դրված է մեծ պատասխանատվություն և պարտավորություն որակյալ մասնագետների պատրաստման հարցում:

Չեմ թաքցնում, հեռահար նպատակների մեջ ուրվագծվում է Շուշիի մասնաճյուղը ինքնուրույն կրթօջախի վերածելու գաղափարը: Եվ քանի որ այս հաստատության հիմնման դժվարին, պատասխանատու աշխատանքի արդյունքներն ավելի քան գոհացնող են, համոզված եմ, որ տեսանելի ապագայում նոր նպատակներն ու ծրագիրը ևս իրականացրած կլինենք:

Օգտվելով առիթից՝ ՀԱԱՀ-ի ու մասնաճյուղի կոլեկտիվների և ուսանողության անունից ևս մեկ անգամ մեր երախտագիտությունն ու շնորհակալությունն ենք հայտնում հայկական երկու հանրապետությունների նախագահներին ու վարչապետներին, բոլոր նրանց, ում ջանքերի շնորհիվ ստեղծվեց այս հոյակերտ կառույցը:

- Մենք էլ շնորհավորում ենք Ձեզ՝ ԼՂՀ-ին մատուցած ծառայությունների և Հանրապետության հռչակման 24-րդ տարեդարձի կապակցությամբ ԼՂՀ պետական պարգևով՝ «Վաչագան Բարեպաշտ» մեդալով պարգևատրվելու համար, մաղթում նորանոր հաջողություններ:

Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՎՍ ՄԵՎ ՆՈՐՈԳՎԱՆ ԴՊՐՈՑ

Քաջաթաղի շրջանի Վուրգավան գյուղը շրջկենտրոն Բերձորից մոտ 40 կմ հարավ է՝ փռված Հակարի գետի ձախ ափի հարթության վրա: Վերաբնակեցվել է 1995թ. և անվանակոչվել ի պատիվ Սիսիանի ազատագրական ջոկատներից մեկի հրամանատար, հերոս-նահատակ Վուրգ Ոսկանյանի: 1997թ. այստեղ բացվեց հանրակրթական դպրոցը, որը տարիներ շարունակ գործում էր երկհարկանի շենքում. մի մասը կիսաքանդ վիճակում էր, իսկ դասասենյակները՝ խոնավ: Սեպտեմբերի 1-ին Վուրգավանի դպրոցականների և ուսուցիչների համար մեծ նվեր մատուցեց ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» կազմակերպությունը, որի ջանքերով Սփյուռքի մեր հայրենակիցները կատարեցին դրամական հանգանակություն, և գումարը հատկացվեց դպրոցի հիմնանորոգմանը: Սեպտեմբերի 5-ին Վուրգավանում կայացավ տոնական միջոցառում. ներկա էին «Հայրենասեր»-ի համահիմնադիր ամուսիններ Նելլի-Շուշի Մարտիրոսյանը և Ստեփան Սարգսյանը՝ իրենց մանկահասակ դասեր՝ Շուշիի հետ:

Վուրգավանցիների տոնին մասնակցելու էին եկել շրջանի հարավային թևի համայնքների ղեկավարներն ու դպրոցների տնօրենները: Երջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի աշխատակցի հայտարարությամբ սկսվում է դպրոցի բացման և անվանակոչման հանդիսավոր մասը: Հինգ Արցախի օրհներգը: Ներկաներին իրենց ելույթներով ողջունեցին դպրոցի 22 աշակերտները՝ երախտագիտություն հայտնելով, որ արդեն մնան դպրոցում են սովորելու:

Դպրոցի տնօրեն Մկրտիչ Փոթոյանը, ողջունելով ներկաներին, ասաց. «Մեր ժողովուրդը միշտ էլ արժևորել է կրթական գործը, որ մատաղ սերունդը կրթի և դաստիարակվի որպես ազգի ապագա: Մեր իշխանություններն անում են ամեն ինչ, որ բարելավվի դպրոցական շենքերի վիճակը, և այս գործընթացին մեծ մասնակցություն են ունենում Սփյուռքի մեր հայրենակիցները»: Մ. Փոթոյանը շնորհակալություն հայտնեց «Հայրենասեր»-ի համահիմնադիրներին, շինարարության հիմնական հովանավորող-բարերարներ Խաչատուր Պողոսյանին և Վարդուհի Աջապանյանին, ԼՂՀ կառավարությանը, շրջվարչակազմի ղեկավարությանը:

Շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանն իր ելույթում կարևորեց Սփյուռքի մեր հայրենակիցների դերը՝ տեղեկացնելով, որ Քաջաթաղի կայացման տարիներից շրջանում գործող 52 դպրոցների մի մասը բացվել է շնորհիվ «Հայ կրթական միության», «Հայրենիք» միության, «Թուֆենկյան բարեգործական

դրոցների շենքերը, նորոգվի Վակուհիսի Վուրգ Ոսկանյանի անվան դպրոցը:



«Հայրենասեր»-ի համահիմնադիր Ս. Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանին, ով մշտապես աջակցել է իրենց շրջանում ծրագրեր իրականացնելու գործում, կարևորեց այն, որ ԼՂՀ կառավարությունը ստանձնել է իրականացնել դպրոցի ջեռուցման խնդիրը: Երախտագիտություն հայտնեց բոլոր բարերարներին, ովքեր ֆինանսավորել են հիմնանորոգումը, հատկապես զվարճար

անուսիններին՝ երիտասարդ ելիզաբեթի և Աբրահամի անունով է կոչվելու դպրոցը: Եղան նաև պարզաներ: ԼՂՀ վարչապետի հուշամեդալով պարգևատրվեցին բարերար ամուսինները:

Բոլոր աշակերտները ստացան նվերներ բարերարների կողմից: Սկզբում իրենց խաղալիքները վերցրին առաջին դասարանցիները՝ Տիգրան և Դավիթ Խաչատրյանները: Կրթօջախի ուսուցիչներն ու աշակերտների ծնողները զվարճար բարերարի կողմից արժանացան դրամական պարգևի: «Հայրենասեր»-ի գործը բարձր գնահատվեց նաև շրջանի և մեկ հարց լուծվել է: Ա. Միսիթարյանը հույս հայտնեց, որ նույնպես տարիներին մնացած համայնքներում ևս կգործեն այսպիսի գեղեցիկ դպրոցներ:

«Հայրենասեր»-ի համահիմնադիր Ս. Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանին, ով մշտապես աջակցել է իրենց շրջանում ծրագրեր իրականացնելու գործում, կարևորեց այն, որ ԼՂՀ կառավարությունը ստանձնել է իրականացնել դպրոցի ջեռուցման խնդիրը: Երախտագիտություն հայտնեց բոլոր բարերարներին, ովքեր ֆինանսավորել են հիմնանորոգումը, հատկապես զվարճար

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Ս. ք. սեպտեմբերի 1-ին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը «Երախտագիտություն» մեդալ շնորհեց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության գլխավոր մասնագետ, կրթության պետական տեսուչ Գայանե ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ՝ մասնագիտական վարպետության, կրթության բնագավառում ունեցած ծառայությունների համար:

Հարգելի տիկին Գայանե, ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ պետական պարգև շնորհելու առթիվ: Մաղթում ենք Ձեզ հետագա բեղմնավոր գործունեություն, բոլոր մտահղացումների իրականացում, քաջառողջություն, ընտանեկան բարեկեցություն, տոկունություն և լավատեսություն:

Վստահ ենք, որ Ձեր գիտելիքներն ու կենսավորած կնաստեսն հանրապետության մանկավարժական հանրության հետագա զարգացմանը:

Հարգանքով՝ Ձեր գործընկերներ:

«Լուսարարը» շնորհավորում է նաև կրթագիտական և մշակույթի բնագավառներում պետական պարգևների և պատվավոր կոչումների արժանացած ներքոհիշյալ անձանց.

«Վաչագան Բարեպաշտ» մեդալով պարգևատրվելու համար՝ Արմեն ԱՇՆՏՅԱՆԻՆ - ՀՀ կրթության և գիտության նախարար, Արշալույս ԹԱՐՎԵՐԳՅԱՆԻՆ - «Հայաստանի ազգային ազդարային համալսարան» հիմնադրամի տնօրեն, Շահեն ԿԱՐԱՄԱՆՈՒՎՅԱՆԻՆ - Երևանի պետական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու:

«Մխիթար Գոշ» մեդալով՝ Լիլիթ ԱՁԻՉՅԱՆԻՆ - Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի, Անահիտ ԲԱՆՅԱՆԻՆ - Ասկերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցի տնօրեն, Կարեն ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ - Շուշիի շրջանի Հին Շենի հիմնական դպրոցի տնօրեն, Ալեկսանդր ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ - Հայրուբի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, Նազիկ ԵՂԻՎՅԱՆԻՆ - Քաջաթաղի շրջանի Իշխանաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն, Արմենուհի ԽԱՆՈՒՄՅԱՆԻՆ - Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, Ջավադ ՀԱՎՈՐՅԱՆԻՆ - Մարտունու շրջանի ճարտարի հ. 3 հիմնական դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցիչ, Համեստ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ - Ասկերանի շրջանի Խաչենի միջնակարգ դպրոցի տնօրեն, Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ - Շահումյանի շրջանի Քարվաճառի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, Լյուդմիլա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ - Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի տնօրեն:

Գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչում ստանալու համար՝ Արպատ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ - ԼՂՀ ԱԺ արտադրության և արտադրական ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովի նախագահ,

Ժողովրդական նկարիչ՝ Լավրենտ ՂԱՍՅԱՆԻՆ - ԱրՊՀ կերպարվեստի ամբիոնի վարիչ,

Վաստակավոր նկարիչ՝ Յուրի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ - «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի ռեկտոր,

Մշակույթի վաստակավոր գործիչ՝ Սլավա ԱՊՐԵՍՅԱՆԻՆ - «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական հանույթի տնօրեն:

ՄԻՇՏ ՄԻԱՍԻՆ ՈՒ ԶՈՐԵՂ

Գնալով զորանուն ու հզորանում է մեր Արցախը: Տարիները բավարար երաշխիք են տալիս մեզ հավատալու, որ հասնելու ենք հուստ իրվանդանին, որ ազատ ու անկախ արելու ու արարելու մեր ժողովրդի դարավոր մաքառումները միմյայն համախմբվածության ու միասնականության, հայրենիքի ճակատագրով անհանգստացող սերունդների հայրենասիրական մղումների առիավատյան են: 24-րդ անգամ, անկախ մեր ոստիկ ամենօրյա ունեւորություններից, որ ավելի հաճախակի են դառնում մասնավոր տոնական ու հիշարժան օրերին, Արցախի ժողովուրդը սիրով ու մեծ հպարտությամբ նշում է Անկախության օրը:



Ամեն տարի այսօրը ուղքի է հանում բոլորին. մեծ թե փոքր, ծեր թե ջահել, զինվոր թե պաշտոնյա շտապում են այնտեղ՝ Հրապարակ, ուր կերտվում էր մեր Սկիզբը 1988-ին: Շտապում են այնտեղ նույն հավատով ու հանձնվածությամբ, ինչ տարիներ առաջ էր: Ու թվում է, թե հենց այնտեղ են բոլորը դառնում մեկ, դառնում մի բռունցք ու մի ձգտում:

Կրկին մարդաշատ է Ասկերանի շրջվարչակազմի հրապարակ: Տոնական այս զեղեցիկ օրը բոլորն իրար շնորհավորում են ու հաջողություններ մաղթում: Ուրախ ու բարձր տրամադրություն է բոլորի սրտերում:

Սպասում են հրաշքի, ու

հրաշքը սկսվում է. Հայաստանի ու Արցախի օրհներգերի հնչյունների տակ դրոշմերով հրապարակ են մտնում զինվորական խորհատ ու կուռ շարքերը:

Մտովի տեղափոխվում են 1988-ի փետրվարյան օրերը, երբ զինվոր էին բոլորը՝ Արցախի ժողովուրդը:

Նայելով զինվորական վաշտագրով անհանգստացող սերունդների հայրենասիրական մղումների առիավատյան են: 24-րդ անգամ, անկախ մեր ոստիկ ամենօրյա ունեւորություններից, որ ավելի հաճախակի են դառնում մասնավոր տոնական ու հիշարժան օրերին, Արցախի ժողովուրդը սիրով ու մեծ հպարտությամբ նշում է Անկախության օրը:

դարձնել հետագայում չխնայելով ոչինչ:

Թողում է երաժշտությունը, երգում է միմյայն ազգային-հայրենասիրական երգեր, որի հնչյունները ծավալվում ու կարծես գուն-հասնում են Նեմրուք ու Կապուտկող, Սիփան ու Մարութա սար:

Գեղեցիկ ու տպավորիչ միջոցառումը կազմակերպվել էր Ասկերանի միջնակարգ դպրոցի ուսուցիչների և աշակերտների միջոցով: Ելույթի իրավունք ընձեռվեց նաև դպրոցի աշակերտ Աշոտ Գաբրիելյանին, որը ՀՀ-ում «Ամենախելացի» մրցություն հաղթել է ու դպրոցի լավագույն աշակերտ ճանաչվել:

Մի ք ո ց ա ու մ ա ն ավարտին շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Ա. Մելքոնյանը մոտեցավ խոսափողին և մի հաճելի հայտարարություն արեց. Ասկերանի շրջանի վետերանների միության միջոցներով նախատեսվում է էքսկուրսիա՝ դեպի Տաթև՝ Ասկերանի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվի և միջոցառման մասնակից երեխաների համար:

Հավաքվածների հիացական բացականչություններն ու բուռն ծափահարությունները դարձան օրը գեղեցկացնող, հաճելի պահեր պարզադր արժանի մարդկանց տքնաջան աշխատանքի գնահատականն ու հավաստումը:

Ս.ԱՋԱՐՅԱՆ

ԻՎԱՆՅԱՆԻ ԱՊԱՋԻՆ ԶԱՆԳԸ ՆՈՐՈՎԻ ԵՐ

Դժբախտաբար չեն հիշում դպրոցական տարիներին Առաջին զանգի որևէ արարողություն, իսկ հետագա տարիներին շատ-շատ Առաջին զանգի արարողություններ են մասնակցել, նույնիսկ՝ կազմակերպել: Մասնակցել են որպես ուսանող, որպես դասավար, դասուղեկ կամ առարկայի ուսուցիչ, որպես փոխտնօրեն կամ տնօրեն, որպես այս կամ այն դպրոցի կողմից հրավիրված հանդիպման կամ արհուրյան դաս կազմակերպող և որպես ԿԳ նախարարության կողմից ամրացված ներկայացուցիչ: Մասնակցել են նաև որպես ծնող, որպես պատասխանատու, այդպես՝ 60-70 տարի: Բայց արդեն ութ տարի է՝ կարողություն և լսում կամ մամուլում ընթերցում դպրոցական առաջին զանգի մասին: Եվ այսօր, հուրախություն ինձ, ավագ ծոռան Առաջին զանգն ինձ պարտավորեցրեց անպայման մասնակցել այդ երազանք-արարողությանը:

Կյանքը չափազանց փոխվել է, մարդկանց կենսամակարդակը՝ բարձրացել է: Դպրոցի բակը մտնելու տեղ չկար. տասնյակ տարբեր մակնիշի ավտոմեքենաներ փակել էին մուտքը, իսկ դպրոցի բակում ասեղ զգելու տեղ չկար: Ի վանյան կոչվող նախկին Խոջալուում այսօր 1400-ից ավելի բնակիչ և 200-ից ավելի աշակերտ կա, և այսօր նորակառույց դպրոցական շենքի բակը չափազանց նեղ է թվում... և դա շատ լավ է:

Աշակերտները՝ ուրախ-զվարթ, ամառային հանգստից առույգ վերադարձած, իրենց դասավար-դասուղեկների գլխավորությամբ շարվում են տողանի, իսկ ծնողները, հիացած իրենց երեխաներով, տաք-տաք գրույցի են բռնված: Մոտենում են ծառի ստվերում հավաքված մի խումբ տղամարդկանց, շնորհավորում նոր ուսումնականի առթիվ և սպասում, որ ավանդույթի համաձայն՝ դպրոցի արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն Արևատ Թովմասյանը կբացի հանդիսավոր արարո-

ղությունը և զեկուցման համար խոսքը կտա դպրոցի տնօրեն Գուրգեն Դուլյանին: Սակայն հակառակ իմ սպասումի (և ոչ միայն իմ) ամբիոնաման փոքր հարթակից լսում են մի աղջկա զգաստացնող զիլ ծայրը.

- Ջարթոնքիցներ, հավսար, զգաստ: Ներս բերել Լեռնային Դարաբաղի Հանրապետության պետական դրոշմը: Եվ «Ջարթոնք» մանկապատանեկան դպրոցական կազմակերպության հիմնեղծի դրոշմների տակ 9-րդ դասարանի լավագույն աշակերտ Արմեն Սարգսյանը երկու փոքրիկների ուղեկցությամբ հպարտ կեցվածքով ու զինվորական քայլվածքով ներս է բերում դրոշմը:

- Սկսում ենք հանդիսավոր տողան՝ նվիրված Լեռնային Դարաբաղի Հանրապետության հռչակման 24-րդ տարեդարձին: (Այո, շատ ճիշտ է, հռչակման և ոչ թե անկախության՝ ինչպես շատերն են շփոթում, չէ՞ որ Անկախության օրը ղեկտեմբերի 10-ն է, երբ բնակչությունը միաձայն «այո» է ասել անկախությանը):

- Սկսում ենք երդման արարողությունը, շարունակում է հրամանաձայն Լիլիթ Բեգլարյանը, որը դպրոցի հպարտությունն է, Հայ երեղեցու պատմությունից հանրապետական օլիմպիադայում նվաճել է առաջին տեղ, իսկ հայաստանյան փուլում արժանացել է առաջին կարգի դիպլոմի:

5-րդ դասարանիցները ընդգրկվում են արժվիկների խմբում, ստանում կրծքանշաններ և կապույտ գույնի փողկապներ, իսկ 10-րդիցները՝ հայկազունների խմբում և ստանում նարնջազույն փողկապներ (ժապավեններ) ու կրծքանշաններ: Երդման արարողության ավարտից հետո հրամանատարը զեկուցում է դպրոցի տնօրենին, որը, շնորհավորելով Արցախի Հանրապետության օրվա սպաթիվ, նշեց հանրապետության նվաճումների մասին, այնուհետև շնորհավորելով նոր՝ 2015-2016 ուստարվա առաջին զանգի առ-

թիվ՝ խոսեց անցյալ տարվա ձեռքբերումների, նոր ուսումնականի հիմնական խնդիրների մասին, 12 աշակերտների՝ որպես ուսման գերազանցիկների, պարգևատրեց զովասանագրերով, իսկ 9-րդ դասարանի աշակերտ Արգիշտի Գալոյանին հանձնեց Համաարցախյան սկստական վեցերորդ բանակումի 2-րդ փուլի ընթացքում ակտիվ մասնակցության համար «Միասին՝ հանուն Արցախի» նշանաբանով պատվոգիրը, Լիլիթ Բեգլարյանին էլ, ինչպես վերը նշեցի, Հայաստանից ստացած առաջին կարգի դիպլոմը: Շատ հաճելի էր 16 երեխաներին առաջին դասարան ընդունելու արարողությունը: Դաստիարակչուհի Սուսաննա Դանիելյանը այդ 16 թմբիկներից առաջ-փառքը հանձնեց «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցության «Սիրտն ավելում են երեխաներին» անվանակարգում հաղթած Անահիտ Ստեփանյանին: Հնչում է երաժշտությունը, երգ ու պար, ասումը:

Շնորհավորական խոսքով ելույթ են ունենում ծնողներ, ուսուցիչներ և որպես դպրոցում միակ ծոռ ունեցող՝ տողերիս հեղինակը, Ասկերանի շրջվարչակազմի անունից՝ շնորհավորական խոսք ասաց գլխավոր ճարտարապետ Ալբերտ Ավանեսյանը:

2015-2016 ուստարվա առաջին զանգը հնչեցնելու պատվին արժանացան 12-րդ դասարանի աշակերտներ Արման Բեգլարյանը և Էլմիրա Սահակյանը, որոնցից մեկն իմ ծոռան՝ Սամվել Սարուխանյանի, իսկ մյուսն էլ իմ արժանահիշատակ թամարա Սարգսյանի նախկին (1960-ական թթ.) աշակերտ, արժանահիշատակ Մխիթար Բեգլարյանի թոռան՝ Գոռ Կիրակոսյանի ձեռքից բռնած, հպարտ հնչեցրին առաջին զանգը: Որքան կուրախսալիք մրանք՝ այս դպրոցի նախկին արժանահիշատակ ուսուցիչները, եթե հրաշքով հարություն առնեին ու տեսնեին, եթե ինչ հպարտությամբ են քայլում զանգակների ձեռքներին մեկի ծոռը, մյուսի՝ թոռը՝ Արցախի պապ-

գա պաշտպանները:

Հանդիսավոր տողանն ավարտվում է դրոշմ դուրս տանելով, բոլորը մտնում են դասարաններ, լսում դասավար-դասուղեկների կողմից պատրաստված բովանդակալից գրույցները, իսկ բարձր դասարանիցների արհուրյան դասն անց է կացնում Ո գործնասից մայր Հայկ Գրիգորյանը:

Այսպես թե այնպես, այդ օրը են մեծ բավականություն ստացա և շատ ուրախ եմ, որ դպրոցի տնօրենությունը նոր ուսումնական տարվա Առաջին զանգի արարողությունը նորովի էր կազմակերպել, ինքս էլ մասնակցեցի առաջին դասարանի առաջին պարապմունքին ու համոզվեցի, որ ծոռանս, որն Արցախյան մեծ հարսանիքի ծնունդ է, ամուր ձեռքերի հանձնեցի:

Առիթից օգտվելով՝ ի սրտե շնորհավորում են բոլոր ուսուցիչներին՝ նոր ուսումնական տարվա առթիվ: Չմոռանա՞մ նշել նաև, որ 20 տարի առաջ Արցախի դպրոցներն առաջին դասարան են ընդունել շուրջ 1000 հոգու, որոնց պայուսակները են և նախարարության առաջնակարգ մասնագետ Նիկոլայ Բաղդասարյանն ենք բաժանել շրջաններին: Իսկ այսօր, հուրախություն բոլորիս, առաջին դասարանիցների քանակը կրկնապատկվել է, նույնիսկ ավելին, թիվը չեն հիշում, գումարած դրան, արդեն քանիերորդ տարին է՝ մեր հանրապետության նախագահի հովանավորությամբ առաջին դասարանիցները ստանում են 20-հազարական դրամ գումար, իսկ ՀՀ «Երկրապահ» կամավորականների միության կողմից՝ որակյալ պայուսակներ՝ գրեական պիտույքներով:

Տա Աստված՝ միշտ խաղաղ երկիրը լինի, և մեր երեխաները մեծանան առողջ-փառք, առանց հոգսերի:

Սառլես ՀԱՐՆԱԶԱՐՅԱՆ
12 թոռան, 6 ծոռան պապիկ

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍ

ՊՎՊԵՐԻ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԻՆ ՆԱՎԱՏԱՐԻՍ

Նոր ուսումնական տարին Արցախի ուսումնական հաստատություններում սկսվում է անկախության դասով: Արդեն ավանդույթ են դարձել ՊԲ հրամանատարության հանդիպումները ուսումնական հաստատություններում: Նպատակը բանակաշինության այս փուլի ու բանակի առջև դրված խնդիրների վերաբերյալ դպրոցականների հետ երկխոսությունն է, ինչպես նաև զինվորական պատվավոր և հայրենասիրական ծառայությանը նրանց ծանոթացնելը:

Ստեփանակերտի Վ. Ջահանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցում անցկացված անկախության դասին ներկա էին ԼՂՀ ԱԺ պատգամավորներ, ՊԲ սպաներ: Բնագիտական մեթոդաբանական հոսքի միացյալ դասարանում զեկուցումով հանդես եկավ ԼՂՀ ՊԲ սոցիալական բաժնի պետ, փոխգնդապետ Սամվել ԱՐԲՄԱՅԱՅԱՆԸ:

- Մենք շատ կարևորում ենք հասարակության յուրաքանչյուր ոլորտի ու հատկապես դպրոցի հետ համագործակցությունը, բանզի ոչ միայն հրամանատարների ու զինվորների 24 տարիների համարձակ գործողությունների, այլև հասարակության հետ համատեղ ջանքերի շնորհիվ է, որ այսօր ՊԲ-ն հասել է պատրաստության բարձր աստիճանի՝ հուսալիորեն պաշտպանելով մեր երկրի սահմանները, մեր ժողովրդի անվտանգությունը: Հիշենք պատմա-քաղաքական ինչ հանգամանքներում և ինչ պայմաններում է ստեղծվել հայոց գորակա ուժը, որտեղ ծառայելը կամ բանակի առջև դրված խնդիրներին ուժերի ներածին չափով լուծելուն նպաստելը յուրաքանչյուրիս սրբազան պարտքն է:

Արցախի պաշտպանության բանակն ունի փառավոր պատմություն, իր կայացման ճանապարհին անցել է դժվարին ու առանց-բային երեք փուլեր:

Առաջին փուլը 1988թ. փետրվարից մինչև 1992թ. մայիսն է: Մոտ 70 տարի՝ 1923-ից մինչև 1991 թվականը, ընդամենը 4,4 հազար քառ. կմ տարածք զբաղեցնող ԼՂ-ն հայության կամքին հակառակ գտնվում էր Ադրբեյջանի տիրապետության տակ: Սակայն բոլորը գիտեն, որ դարեր առաջ այդ հիմնավորը հայկական շարածքը՝ Արցախ անվանումով, Մեծ Զայքի 10-րդ մահանգն էր՝ բնակեցված հայերով: Այդ տարածքը եղել է մի քանի անգամ մեծ, ձգվում էր Արաքս գետից մինչև Ասանա լճի արևմտյան մատույցները: Ժամանակի ընթացքում, այն բանից հետո, երբ սկսեցինք հեռու մնալ գեներից, մեր տարածքները մաս-մաս անցան քոչվոր ցեղերին: Խաչնարած թուրք ցեղերը հրի ու սրի էին մատնում հայկական ծաղկուն քաղաքներն ու գյուղերը, տիրանում հայ ժողովրդի արդար քրտինքով դարձրելով ստեղծած հարստությանը, գերեզմարում ու բնաջնջում խաղաղ բնակչությանը: Արցախահայությունը, հարյուրամյակներ շարունակ գեներ ձեռքին կենաց-մահու անհավասար պայքար մղելով, ոտքի ելավ մի քանի անգամ բանակապետ իրեն գերազանցող հակառակորդի դեմ: Այդ պայքարի նորագույն փուլն սկսվեց 1988թ. փետրվարին, երբ արցախահայությունը պահանջեց վերամիավորվել մայր Հայաստանին: Ադրբեյջանը սրբերով ընդունեց այդ պահանջը և սկսեց խուճել ուժի դիրքերից: 1988-1990թթ. հայաշատ բնակավայրերում՝ Սունգալիթում, Բաքվում, Կիրովաբադում տեղի ունեցան հայերի կոտորածներ և բնակչության բռնատեղահանումներ: Հայության գոյությունը նորից դրվեց հարցականի տակ: Ադրբեյջանը ձգտում էր արյան մեջ խեղդել Արաքսաղյան շարժումը և հարցը լուծել ռազմական ճանապարհով: Այդ նպատակով չորս կողմից շրջափակել էր Արցախը և զրկել Հայաստանի հետ ցամաքային կապ ունենալու հնարավորությունից: Արցախը հայտնվել էր կրակի տակ: Արտաքին աշխարհի հետ միակ կապն օդային էր, որն անխափան իրականացվում էր մեր հերոս օդաչուների անձնակազմի խիզախության շնորհիվ: Ձինամթերքի, սննդամթերքի, դեղորայքի խիստ կարիք էր զգացվում: Դարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեյջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և ԼՂ բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ: Այս ժամանակահատվածի հիմնական առանձնահատկությունն ու բնորոշիչը ինքնաբուխ հայրենասիրությունն էր: Կազմավորվում էին կամավորական ջոկատներ, որոնք, ռազմականացված հիմնարկություններ

րից, հակակարտային հրետանու կայանքներից ռազմագիտության դասարաններից ու բոլոր հնարավոր այլ վայրերից զենք հայթայթելով, կամավորաբար, հայրենասիրական ու բարոյական արժեքներից դրդված, մեկնում էին սահմանի անենաթեժ կետերը՝ անհավասար կռիվ մղելով հակառակորդի դեմ: Այս ամենին զուգահեռ՝ թեթև ռազմական գործողությունները սահմանի երկայնքով արդեն վերաճել էին իսկական պատերազմի՝ իրենց ահազանցող ծավալներով:

Պատերազմական տարին մեզ համար սկսվեց բավականին հաջող: Հիմնականում ավարտելով Դարաբաղի ներսում ադրբեյջանական կրակակետերի ոչնչացումը՝ 1992թ. մայիսին ինքնապաշտպանական ուժերը փայլուն կերպով իրականացրին Շուշիի ազատագրման օպերացիան՝ գրելով մեր նորոյա ռազմական տարեգրության ամենափառահեղ էջերից մեկը:

Երկրորդ փուլը 1992թ. հունիսից մինչև 1994թ. մայիսն է, երբ անկախ Հայաստանի Հանրապետությունը, ԼՂՀ-ի հետ միասին գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ Ադրբեյջանի Հանրապետության հետ, միաժամանակ ձեռնամուխ եղավ ազգային բանակի ստեղծմանը: Մարտական գործողությունների ողջ ժամանակաընթացքում հակառակորդը մեր նկատմամբ ուներ կենդանի ուժի և զին-տեխնիկայի բացարձակ առավելություն: Ազերիները, ոգևորված խորհրդային բանակի՝ Ադրբեյջանի տարածքում տեղակայված ստորաբաժանումների մեծաքանակ սպառազինության անարգել բռնագրավումով, վարձկան-

Լեռնիկ Բաղունցն իրենց անձնական խիզախությամբ և արիությամբ առաջինն էին մետվում գրոհի, մարտերում ցուցաբերում աննկուն կամք, բարձր մարտական ոգի: Նրանք ոչնչացրել են հակառակորդի մի քանի տասնյակ կենդանի ուժ և հնուտ գործողություններով նպաստել մարտի բարեհաջող ելքին: Կան բազմաթիվ նման հերոսական դրվագներ, և կան շատ ու շատ ուրիշ հայորդիներ, ովքեր փառքով են պսակվել իրենց ամունները և մեր կողքին շարունակում են պայքարը հանուն հայրենիքի: Հիշենք այն հերոս զինվորներին, ովքեր 2010թ. սեպտեմբերի 4-ին Մարտակերտի պաշտպանության հատվածում սառնասրտորեն ոչնչացրին մեր դիրքերը ներխուժած՝ մինչև ատամները զինված ասկյարներին: Հիշենք այն առյուծասիրտ դիրքապահին, որը 2010թ. հունիսի 18-ին, առանց աչքը թարթելու, սարսափահար արեց



Մատաղիսի մեր դիրքերը գրոհող Ադրբեյջանի ազգային հերոսին: Այդ, այդ քաջագործությունները կատարում են շարքային զինվորները, որոնց համար հայրենիքն ու պատվը գտնվում են նույն բարձրության վրա: Գաղտնիք չէ, որ մեր բանակի ներկայիս զինտեխնիկայի և տարբեր զինատեսակների մի զգալի մասը հակառակորդից խլված ռազմավար է: Չպետք է կարծել, սակայն, թե նա հենց այնպես է դրամք մեզ գիշել: Հակառակորդը պարզապես չի դիմացել մեր արիասիրտ զինվորների սրընթաց գործողություններին, նրանց ոգու ուժին, բազկի գործությանն ու մասնագիտական վարպետությանը:

1993թ. մարտի վերջին իրականացվեց Քելբաջարի օպերացիան, ազատագրվեց Հայաստանն ու Դարաբաղը սեպի պես զարկող այս կարևոր հատվածը: Հունիսին հակառակորդը, ծանր մարտերից հետո չկարողանալով դիմակայել հայկական ինքնապաշտպանական ուժերի շեշտակի գրոհներին, հարկադրված էր թողնել Մարտակերտը հարող բնակավայրերը, հունիսին՝ Աղդամը, օգոստոս-հոկտեմբերին՝ Ֆիզուլիյն, Ջաբրայիլը, Դուբաթլուն, Չանգելա-րը, ինչը թույլ տվեց Պաշտպանության բանակին երկրի երկայնքով ձևավորել պաշտպանության գոտի: Մեր նորագույն պատմության մեջ առաջին անգամ մենք վերադարձրինք դարձրելով մեզանից խլված մեզ պատկանող տարածքները: Այժմ Արցախի Հանրապետության տարածքը կազմում է 11 հազ. քառ. կմ՝ 2,5 անգամ գերազանցելով 1923թ. Լեռնային Դարաբաղի տարածքը:

Թվում էր՝ այս պարտությունը պետք է բավարար լիներ հակառակորդին՝ գիտակցելու իր նկրտումներին ու հույսերի բացարձակ սնանկությունը: Բայց ադրբեյջանական բանակը, չխրատվելով այս ջարդից, 1993թ. դեկտեմբերին անցավ նախադեպը չունեցող հարձակման: Ծակատամարտը, որը տևեց ուղիղ 5 ամիս, ավարտվեց հայկական պաշտպանական ուժերի լիակատար հաղթանակով: Պատրված հակառակորդը, որը մինչ այդ լսել անգամ չէր ուզում զինադադարի մասին, գլխիկոր համաձայնվեց այն ստորագրել: 1994 թ. մայիսի 12-ին Բիշքեկում և մայիսի 16-ին արդեն Մոսկվայում Հայաստանի, Դարաբաղի և Ադրբեյջանի պաշտպանության նախարարությունների հետ համատեղ ստորագրվեց հրադադարի մասին համաձայնագիր: Պատերազմը զոհեց առժամանակ դադարեց՝ դրանով իսկ նախանշելով մեր բանակի պատմության երկրորդ փուլի ավարտը:

Երրորդ փուլն ընդգրկում է 1994թ. հուլիսից մինչ օրս: Այս փուլը կարելի է անվանել բանակաշինության փուլ: Արդեն խաղաղ պայմաններում նորաստեղծ բանակը, նրա հրամանատարական կազմը հնարավորություն ստացան լծվելու բանակաշինության գործին՝ ուշադրություն դարձնելով առավելապես բանակի ներքին խնդիրներին: Բանակաշինության գործընթացն ընդգրկեց ռազմական համակարգի՝ առանց բացառության բոլոր ոլորտները: Պետք է հիշել՝ մենք տարածքներ չենք գրավել, այլ ապահովել ենք մեր խաղաղ բնակչության անվտանգությունը, ազատագրել ենք մեր հիմնավորը հայկական հողերը, վերականգնել պատմական ճշմարտությունը: Մենք ուրիշի հարստությանը չենք տիրացել, ետ ենք բերել կորցրածը: Մեզ բնավ հրճվանք չեն պատճառում ուրիշի դժբախտությունն ու ցավը, սակայն այլևս չենք հանդուրժի հակառակորդին իր եղջանկությունը կառուցել մեր զինված շարունակում է առաջին հավաքական գործելակերպը, ինչի հետևանքով դարաբաղ-ադրբեյջանական սահմանի շփման գծում տիրող իրավիճակը մնում է լարված: Ադրբեյջանի ակադեմիկոսները բազմիցս

փորձել են ներթափանցել հայկական ուժերի դիրքերը ու այդ նպատակով դիվերսիոն գործողություններ են ծավալել՝ միաժամանակ խոչոր տրամաշափի հրաձգային ու հրետանային զրահատեսակներից կրակ արձակելով մեր դիրքերի ուղղությամբ: Միջազգային խաղաղասիրական կառույցները սաստելու, բռնությունը դադարեցնելու փոխարեն ընդհանուր կոչեր են հնչեցնում՝ կոնկրետ չնշելով իրավիճակի սրման բուն մեղավորին՝ ադրբեյջանական ղեկավարությանը: Դաժճին ու գոհին հակառակորդներն ու նման վարքագիծը չթուլացրեց լարվածությունը, ընդհակառակը, կրակի վրա յուր լցրին: Ազերիները չհանդարտվեցին ու կորուստներ անտեսելով՝ շարունակեցին սադրանքներով ու ելուզակություններով խաթարել մեր հանգիստը: Բայց, ի վերջո, հաստեց հայրենիքի պաշտպանի համբերությունը. հայ մարտիկները վճռականորեն կասեցրին ռազմական տրամաբանությունից զուրկ՝ անմիտ վրեժխնդրությամբ լեցուն թշնամու սանձազերծած բոլոր ոտնձգությունները և նրան արժանի հակահարված տվին: Տարեսկզբից մինչ օրս ադրբեյջանական զինուժի մարտական կորուստները կազմել են ավելի քան 60 ասկյար: Ցավոք, մենք էլ գոհեր ունեցանք՝ 15 քաջորդիներ, ովքեր իրենց կյանքի գնով ապացուցեցին, որ ռազմական գործողությունների ճակատագիրը որոշվում է ոչ թե մարդկանց թվաքանակով և սպառազինության գերազանցումով, այլ միայն ու միայն որոշում է մարտական ոգին, այն բանի գիտակցումը, որ այս արևի տակ հայրենիքից թանկ ոչինչ չկա: Նրանք ընկել են ու անմահացել, ընկել են ու կանգուն մնացել մեր հայոց աշխարհում: Հավերժ փառք նրանց:

Մարտադաշտում քաջաբար ընկած իրենց եղբայրների վրեժը սրտում՝ մեր պատժիչ խմբերը հրամանակարար են ներխուժել են հակառակորդի առաջնագիծը, նրան շրջանցել թիկունքից և պատվով կատարել իրենց խնդիրը ու անվնաս վերադարձել: Փառք ու պատիվ նրանց:

Կյանքը ցույց տվեց, որ մեր պատմության այս շրջանը դեռ չի հասել իր տրամաբանական ավարտին, որ տարածաշրջանը շարունակվում է մնալ պայթյունավտանգ ու անկանխատեսելի, և սահմանների վերաձևման յուրաքանչյուր փորձի երաշխավոր հանդիսանում են ոչ այնքան միջազգային իրավունքի նորմերը, որքան մեր ժողովրդի, մեր պետության և առաջին հերթին երիտասարդության ունեցած մեծ ներուժի միշտ օգտագործումը, Արցախի զինված ուժերի հզորության ու մարտունակության շարունակական բարձրացումը: Անկախության մեր երիտասարդ սերունդն ապացուցեց, որ պատերի սուրբ գործին մկրտված, հավատարիմ ու արժանի սերունդ է:



ների, նույն բանակի անգործ, հետևապես առանց գոյության միջոցների մնացած մեծաքանակ սպաների առկայությունից ու մեր հապաղումից, անցավ լայնածավալ հարձակման: Այս փուլը մեր պատմության մեջ եղավ ծանրագույն փորձության շրջան: Բայց հայ զինվորը մաքառեց, կանգնեցրեց հակառակորդին և ի վերջո հաղթող դուրս եկավ մեզ պարտադրված անհավասար պատերազմում: Ձինված որսորդական հրացաններով ու ինքնաշեն գեներով՝ հայ մարտիկները անվախ մետվում էին հակառակորդի տանկերի առաջ և հարթում: Նման պայմաններում հնարավոր էր հաղթել միայն մարտական բարձր ոգի, սեփական ուժերի նկատմամբ վստահություն ունենալու և մեր հաղթանակին հավատալու դեպքում: Բանակի պատմությունը կերտվել է բազում քաջերի շնորհիվ: Նրանցից շատերը 18-ը դեռ չէին բոլորել, սակայն հայրենիքի կանչով տարբեր բնակավայրերից եկել ու համախմբել էին ազատության դրոշի ներքո:

Օրինակները բազում են: Անվեհեր մարտիկ Նաիրի Բեգլարյանը հակատանկային միջոցներով ռազմաճակատի տարբեր հատվածներում շարքից հանել է հակառակորդի մեկ տասնյակից ավելի զրահատեխնիկա: Քաջարի տանկիստ Հայկազ Հակոբջանյանն իր տանկով ոչնչացրել է հակառակորդի 14 տանկ, որից միայն 4-ը՝ մեկ մարտի ընթացքում և բանակի պատմության մեջ առաջինն է արժանացել «Մարտական խաչ»՝ 1-ին աստիճանի շքանշանի: Այդ բարձր պետական պարգևը նրան հանձնվել է անմիջապես մարտի դաշտում: Հակառակորդի մարտական դիրքերը միշտ առաջինների շարքում գրոհող մեր մյուս քաջարի տանկիստ Լավրենտ Շուժանյանն իր տանկով 28 անգամ պայթել է հակառակորդի հակատանկային ակամի վրա, բազմաթիվ անգամ վիրավորվել, բայց նորից շարք է վերադարձել ու մետվել մարտի: Հետևակայիններ Ալեքսանդր Հարությունյանը,

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՊԱՐԳԵՎՆԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՆԱԿՆԵՐԻՆ

ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանի մոտ դպրոցականներին պարզա- տրելու հերթական արարողություն էր: Պարզատրողը ռուս գրող, հայ ժողովրդի մեծ բարեկամ, արցախցի- ներին ոչ անհայտ Կոնոպլովն էր: Պարզատրվողները «Սիրում են քեզ, Արցախ» թեմայով շարադրու- թյունների մրցույթում հաղթողներն էին, որոնց աշխատանքները նաև հրատարակվել են համաձայն գրքույ- կում:

Ինչ դարձել է իր երկրորդ հայրենիքը, և ամեն անգամ այստեղից գնալով մտածում է՝ ինչ լավ բան կարող է անել նրա համար: Այս մրցույթը հայ- տարարելով՝ նա ցանկացել է տեսնել, թե ինչքանով են Արցախի երեխաները ճանաչում իրենց երկիրը, որովհետև սիրելի հայրենիքը՝ նախ և առաջ նշա- նակում է իմանալ նրա պատմությունը, հողերը արժեքները և ունենալ դրանք պահպանելու ձգտում: Նրա խոստով- ճանությամբ՝ իր համար դժվար էր

տուրքունն ու անկախությունը: Բայց անցնելով այդ բոլոր փորձությունների միջով՝ շարունակում են կերտել իրենց հայրենիքը: Այդ ամենն ամփոփված է «Սիրում են քեզ, Արցախ» պարզ ար- տահայտության մեջ»,- ասաց նա: Ռուս բարեկամն իր հեղինակային կայքէջի՝ գեղեցիկ ձևավորած առա- ջին դիպումը հանձնեց ԿԳՍ նախա- րար Ս. Ասրյանին՝ իրենց նախածեռ- նություններին սատարելու համար: Պարզատրվեցին նաև ռուսաց լեզվի մասնագետ Ռ. Օսիպովը, ինչպես և հայոց լեզվի և գրականության տեսուչ Գ. Գրիգորյանը՝ մրցույթի անցկացմանն աջակցելու համար, գրող-լրագրող Աշոտ Բե- գլարյանը, ով առաջինն իր հա- մար բացեց Արցախը: Իսկ դպրո- ցականներից դիպումների և դրամական պարգևների արժա- նացան լավագույն ճանաչված հինգ շարադրությունների հեղի- նակներ. Արմեն Ավագյան (գ. Տու- մի), Լիլյա Սարգսյան (հ. 3 դպ- րոց), Լիզա Սիրգոյան (գ. Խնա- ծախ), Շողեր Սարգսյան (հ. 11 դպրոց), Իրինա Ալեքսանյան (ք. Չաղոթ): Ի դեպ, այդ ամենը,



ընտրել լավագույն գործերը, քանզի բոլորն էլ անկեղծ էին, յուրաքանչյուրը գրել էր իր ծննդավայրի, հայրենիքի ազատության համար պայքարած, կյանքը տված հոր, հարազատի, բա- րեկամի մասին: Այդ բոլոր շարադրու- թյունները նա տեղադրել է «Նաչա սրեդա» իր կայքէջում, որը բազմաթիվ դրական արձագանքներ է ստացել: «Շատ կարևոր է արցախցի երեխանե- րի՝ հայրենիքի նկատմամբ սիրո խոս- քերը հասցնել նրանց, ովքեր դեռ չգի- տեն Արցախի մասին: Մարդիկ պետք է իմանան այս իրենց հայրենիքը, թե ինչպես են ձեռք բերել իրենց ազա- լանքը»:

ինչպես տեղեկացրեց Վ. Կոնոպլովը, հովանավորել է արցախցի, ծնունդով Չաղոթի շրջանից, Սանկտ Պետեր- բուրգում բնակվող ճարտարապետ Մաքսիմ Աթայանը: Հովանավորը նաև հատուկ մրցանակի է արժա- նացրել հաղորդիցի դպրոցական Ար- մեն Ավագյանին: Իսկ ռուսացիները նվեր ստացան բանաստեղծի գրքե- րից: Նախարար Ս. Ասրյանը բարձր գնահատեց Վ. Կոնոպլովի արցա- խանապատ գործունեությունը և նրան պարգևատրեց «ԼՂՀ 20-ամյակ» հու- շամեդալով: Սեփ. լրատվություն

Շնորհավորանք ՍԻՐՈՎ ՈՒ ԱՎՆԱՏԱՆԵՈՎ



Երջանիկ է այն մարդը, ով հետ մայելիս իր անցած տարիների շքերթում տես- նում է ժողովրդի լուսավոր- րությունը, սերունդներին ըն- ծայած իր սրտի թրթռումներն ու հոգու երանգները: Այդ երջանիկներին է ԼՂՀ գնահատման և թեստավոր- ման կենտրոնի տնօրեն Յու- ռի Քարամյանը՝ Արցախ աշ- խարհի կրթական համա- կարգում բարի համբավ ձեռք բերած Մարդը: Ծնվել է 1955թ. սեպտեմ- բերի 18-ին ԼՂԻՄ Խնածախ գյուղում: 1972թ. ավարտել է Բաքվի հ. 163 միջնակարգ դպրոցը, 1976-ին՝ Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆա- կուլտետը:

1983-89թթ. աշխատել է Բաքվի հ.163 դպրոցում՝ որ- պես մաթեմատիկայի ուսուցիչ և դպրոցի փոխտնօրեն: 1989-93թթ. Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում աշխա- տել է որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1993-2007թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բա- նակում. 1997-2002 թթ.՝ որպես ԼՂՀ ՊԲ հրետանու վար- չության շտաբի պետ, իսկ 2002-2007 թթ.՝ հրետանու պետ: 2002թվականին ստացել է գնդապետի կոչում: Պարզատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով և մեդալներով: 2007թ. նոյեմբերից առ այսօր աշխատում է ԼՂՀ գնա- հատման և թեստավորման կենտրոնի տնօրենի պաշտո- նում: Սեպտեմբերի 18-ին լրանում է Յուրի Քարամյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը: ԳԹԿ-ի ողջ կոլեկտիվը մեծ սիրով ու անճնաջերմ ցան- կություններով շնորհավորում է Ձեզ, հարգելի Յուրի Սերգեյի, ցանկանում անսպառ կորով ու Ձեր կյանքի հետագա ճանապարհին՝ միայն վառ ու պայծառ լույսեր: Թող Ձեր հոգին թրթռա միայն հարթանակի բերկրանքից, թող Ձեզ միշտ ուղեկից լինեն լավ ու բարի, իսկ փորձություններից դուրս զաք հաղթանակած: Հարգելի Յուրի Քարամյան, Ձեր լավատեսությունը, դրական էներգիան բոլորիս է հաղորդվում, անգամ՝ վիր- տուալ կապուղիներում: Լավ Մարդ, լավ Ընկեր, լավ Ղեկավար, լավ ընտանի- քի Հայր, ծնունդդ շնորհավոր: ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնի կոլեկտիվ

Մասնագետի խորհուրդ

ՀԱՂՈՐԴԱԿՅԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆՉԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ

Օտար լեզուների դասավան- դումը հայկական դպրոցներում ուղեկցվում է մի շարք դժվարու- թյուններով, որոնք ջանասիրա- բար փորձում են հաղթահարել մեր դպրոցների օտար լեզվի ու- սուցիչները: Բացի տառուսուցու- մից, գրավոր հմտությունների ուսուցումից՝ հարկ է ուշադրու- թյուն դարձնել նաև բանավոր խոսքի ուսուցմանը (ուսկնդրում, խոսք): Հայալեզու դպրոցներում նշված ունակությունները հնա- րավոր է զարգացնել գրեթե նվա- ճագույն չափով, իսկ ինչ վերա- բերում է բանավոր խոսքի զար- զացմանը, արդեն խնդիր է հան- րապետության գրեթե բոլոր գյու- ղական դպրոցներում: Այդ են վկայում կատարված տեսչական ստուգումները: Պատճառները թերևս և՛ սուբ- յեկտիվ են, և՛ օբյեկտիվ: Օբյեկ- տիվ են այն պատճառով, որ նախ բացակայում է կենդանի շրջա- պատը, մեր աշակերտներն անզերեմը չեն օգտագործում որպես առօրյա խոսակցական լեզու, տանը, դրսում կիրառման մեջ չի դրվում լեզուն, չկա համա- պատասխան շփման միջավայր: Լեզուն կիրառելու միակ վայրը դասարանն է, միակ մարդը, ում հետ պետք է իրականացվի հա- ղորդակցումը՝ ուսուցիչը: Սուբյեկտիվ են այն պատճա- ռով, որ դպրոցի օտար լեզվի ու- սուցիչները անհրաժեշտ ուշադ- րություն չեն դարձնում բանավոր խոսքի, այսինքն՝ հաղորդակցա- կան ունակությունների զարգաց- մանը (communicative skills) դա- սագործընթացում, սահմանա- փակվում են միայն դասարանա- կան արտահայտությունների օգ- տագործմամբ, որոնք շատ քիչ

են սովորողների բանավոր խոս- քը զարգացնելու համար: Մի մասն էլ ընդհանրապես խուսա- փում է անզերեմ խոսել դասե- րին: Աշակերտներն իրենք ամա- չում են անզերեմ խոսել և ան- համապատասխան վերաբեր- մունք են ցուցաբերում շրջապա- տում օտար լեզվով խոսք լսելիս: Անհրաժեշտ է բարոյահոգեբա- նական մոտեցում ցուցաբերել առաջին հերթին սովորողների համոզեա՝ նրանց մոտ վերացնե- լու նման կաշկանդված վիճակը, հաղթահարելու ֆիզիոլոգիական և հոգեկան բարդությունները, հաս- նելու այն բանին, որ տվյալ օտար լեզուն (լինի անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, մույ- նիսկ՝ ռուսերեն. վերջինս հա- մարվում է տարածաշրջանում ավելի հանրամատչելի լեզու, քան մնացած օտար լեզուները) համարվի ընդունելի դասագոր- ծընթացում, և հնչող անզերեմ (ֆրանսերեն, գերմաներեն) խոս- քը պատշաճ արձագանք և պա- տասխան ստանա: Իսկ ի՞նչ պետք է անել հաղոր- դակցական հմտությունները, այլ կերպ՝ բանավոր խոսքը հնարա- վորինս զարգացնելու դպրոցա- կան ծրագրի շրջանակներում: Հաղորդակցումն ինքնին ներա- ռում է պարզագույն երկխոսու- թյունների, մարդկանց առօրյա- յից սովորական հարցուփորձի, իրենց նախընտրությունների, դասընկերների հետաքրքրու- թյունների մասին տեղեկանալու և այլնի միջոցով խոսքի ստեղ- ծում, նաև e:mail հաղորդագրու- թյունների ուղարկում, ընթացիկ նորությունների, որևէ հետաքր- քիր գրքի, հոդվածի, հասարա- կական, քաղաքական, մշակու- թային, TV կամ YouTube հոլովա-

կի քննարկում: Ձևավորված լինելով 1970- 1980-ականներին՝ լեզուների ու- սումնասիրության աճող պահան- ջի արդյունքում, այս մեթոդը տա- րածվել է ողջ աշխարհում՝ Միացյալ Թագավորությունում, ԱՄՆ-ում և հատկապես Եվրոպա- յում: Եվրոպական շուկայի զարգացումը հանգեցրեց եվրո- պական ինտեգրմանը, և, հետևաբար, ձևավորվեց մարդ- կանց մեծամասնություն, ովքեր կարիք ունեին օտար լեզուներ սովորել ամենագործնական նպատակներով, օրինակ՝ աշ- խատանք գտնել կամ էլ անձնա- կան նպատակներով հաղոր- դակցվել լեզվակիրների հետ. որևէ բան հարցնել (shopping, travelling, going through customs, requests etc), որն էլ իր հերթին փոփոխություն մտցրեց ուսու- ցանման մեթոդիկայի մեջ: Հաղորդակցման մեթոդը եկավ փոխարինելու ավելի հին՝ Grammar-Translation մեթոդին, որը կիրառում էր հետևյալ ուղիները. - գրական-գեղարվեստական տեքստի թարգմանություն (գրա- վոր կամ բանավոր), - վերլուծական հարցերի ըն- թերցում, - հոմանիշների (հակահիշե- րի) ընտրություն, - բաց թողնվածի լրացում (վարժություններ), - մտապահում, - բառերի տեղադրում նախա- դասություններում, - շարադրություններ: Ինչպես տեսնում եք, այստեղ չկա բանավոր խոսքի զարգաց- մանն ուղղված որևէ մեթոդի կի- րառում: Ըստ այդմ, այս մոտեց- մամբ առաջնորդվող ուսուցիչնե-

րը (դրանց թիվը, ցավոք, առաջ- սոր շատ է) ներկայիս աշակեր- տակենտրոն ուսուցման շրջա- նակներում չեն կապիտում հա- մապատասխան գիտելիքների մատուցում հանրակրթական դպրոցում: Այստեղից էլ՝ թույլ է և՛ իրենց՝ ուսուցիչների, և՛ աշա- կերտների բանավոր խոսքը, չկա շփում: Իսկ հաղորդակցական մո- տեցման կիրառումը (commu- nicative approach) ենթադրում է՝ - բանակցային գործընթաց, - տեղեկատվության փոխան- ցում (sharing information), - փոխներգործում մոտեցում (interaction), - գրույց-քննարկումներ, - երկխոսություններ և դերերի կատարում, - թատերականի և նմանակու- թյունների կիրառում, - խաղեր (ինտելեկտուալ, զվարճալի և այլն), - հարցադրումներ, մտազրոհ- ներ, վիճարկումներ, իմպրովի- զացիա: Համեմատելով այս մեթոդնե- րը՝ կտեսնենք, որ ներկայիս աշակերտի մոտ հաղորդակցա- կան հմտությունները զարգաց- նելու համար ավելի արդյունա- վետ է այս մոտեցման մեթոդիկա- յի կիրառումը մեր դպրոցներում: Ուշադիր ուսումնասիրելով առարկայական ծրագիրն ու դա- սագրքերը՝ ուսուցիչները կարող են համոզվել (խոսքը միայն անզ- լերենի ուսուցիչներին չի վերա- բերում), որ համապատասխան դիրքորոշում ընդունելով՝ կարե- լի է հասնել հաջողությունների: Աշակերտները կարող են լավ կարդալ, գրել, ունենալ քերական- նական հարուստ գիտելիքներ (դա նկատելի է քաղաքային և մի

շարք գյուղական դպրոցներում), սակայն չունենալ բանավոր խոսք: Նրանք չեն կարողանում կիրառության մեջ դնել լեզուն՝ նույնիսկ գերազանցապես տի- րապետելով լեզվի բառապաշա- րին և քերականությանը: Կատա- րելով դասագրքի շրջանակնե- րում տեղ գտած քննարկումները, բանավոր և մարզողական բնույ- թի վարժությունները, խաղերը, տեքստերի հետ ճիշտ աշխա- տանքը՝ կարելի է որոշակիորեն զարգացնել աշակերտների բա- նավոր խոսքը, նրանց խոսել սո- վորեցնել: Նախ խոսելով դուք՝ կխոսեն նաև աշակերտները: Ժա- մանակի ընթացքում կմշակվի լե- ճուն, առկա լեզվական վիճակու- մներն իրենց տեղը կզիջեն ճիշտ և գրագետ կառուցված խոսքին, և մեր դպրոցներում գրեթե մեկ դա- սածամի ընթացքում կապանա- վեն օտար լեզվի կիրառման չա- փանիշները, աշակերտները չեն զարմանա կենդանի խոսք լսե- լով, ինչն էլ կնպաստի միջլեզվա- կան և միջմշակութային կապերի ամրապնդմանն ու նրանց՝ օտար լեզվով ազատ ու անկաշկանդ հաղորդակցվելու նախապա- մանների ստեղծմանը: Արտա- քուստ թվացյալ դժվարություն- ները ներքուստ հաղթահարելի են և իրականացվող, մնում է կա- տարել այդ անցումը՝ հին և ար- դեն իրենց սպառած մեթոդներից դեպի նոր, արդյունավետ, հեշտ և կիրառելի մեթոդների, որն էլ ոգևորությամբ կընդունվի եթե ոչ բոլոր, ապա ուսումնասեր աշա- կերտների կողմից:

Կ. ՓԱԹՅԱՆ
ԼՂՀ ԿԳՍՆ օտար լեզվի տեսուչ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014-2015 ՈՒՍԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՆՄԱՆ



Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի

նակրթական դպրոցների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 113 երեխա, որոնցից 19 աշակերտի հետ ուսուցումը կազմակերպվում է անհատական ծրագրով՝ տնային պայմաններում, 94 աշակերտ ներառված է մասսայական դասարաններում, իսկ 8 աշակերտ ընդգրկված է հ. 9 դպրոցում գործող խուլ-համրերի դասարաններում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 74 երեխայի ուսուցման գործընթացը կազմակերպվում է հ.հ. 1, 2 և 9 հիմնական դպրոցներում, որտեղ շարունակում են տարվել նպատակային աշխատանքներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու համար:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցների կուլեկտիվների և հատկապես այդ ուղղությամբ աշխատող մասնագետների՝ հատուկ մանկավարժների, հոգեբանների և սոցիալական կրթության ջանքերի շնորհիվ երեխաներն արդեն իսկ իրենց զգում են որպես կուլեկտիվի լիարժեք անդամ և ընդունվում են ընկերների կողմից, որն էլ ամենակարևորն է:

Ուսումնական տարվա վերջին տվորողների քանակն ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում կազմել է 7294 աշակերտ, որից փոխադրվել է հաջորդ դասարան 7152 աշակերտ: Ամառային առաջադրանք է ստացել 130 աշակերտ (նախորդ ուսումնականում՝ 167), մնացել նույն դասարանում՝ 12-ը (նախորդ ուսումնականում՝ նույնպես 12-ը):

Փոխադրական դասարաններում ուսումնական տարին գերազանց գնահատականներով ավարտել և փոխադրվել է հաջորդ դասարան հ.1 դպրոցից՝ 134, հ.2-ից՝ 66, հ. 3-ից՝ 18, հ. 4-ից՝ 12, հ.5-ից՝ 43, հ.6-ից՝ 21, հ.7-ից՝ 194, հ.8-ից՝ 15, հ.9-ից՝ 21, հ.10-ից՝ 92, հ.11-ից՝ 5, հ.12-ից՝ 1, ֆ/մ-ից՝ 60, ՌՄՎ-ից՝ 1, ընդհանուր հաշվով՝ 633 աշակերտ (նախորդ ուսումնականում՝ 618)՝ ստանալով գերազանցության գովասանագրեր:

Մի քանի փաստեր կենտրոնացված քննությունների արդյունքների մասին. 9-րդ դասարան «Մաթեմատիկա» առարկայից մասնակցել է 314 աշակերտ, որից «անբավարար» է ստացել 6 աշակերտ, որը կազմում է մասնակիցների 2%-ը, 8-13 միավոր ստացել է 221 աշակերտ (70%), 14-17 միավոր՝ 85 աշակերտ (27%), 18-20 միավոր ստացել է 2 աշակերտ (1%):

«Հայոց լեզու և գրականություն» առարկայից մասնակցել է 312 աշակերտ, որից «անբավարար» է ստացել 25 աշակերտ (8%), 8-13 միավոր ստացել է 248 աշակերտ (79%), 14-17 միավոր՝ 36 աշակերտ (12%), 18-20 միավոր ստացել է 3 աշակերտ (1%):

Դպրոցներում կազմակերպված 4 առարկաների քննություններից ոչ մեկը բացասական գնահատական չի ստացել, իսկ կենտրոնացված՝ հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից 31 աշակերտ (նախորդ տարի՝ 21) ստացել է «անբավարար»:

Մայրաքաղաքի 15 ուսումնական հաստատություններից 6-ում է իրականացվում 12-ամյա կրթություն: Դրանք են՝ հ.8, 11 ավագ, հ.3 միջնակարգ և ֆիզմաթ հատուկ դպրոցները, ռազմամարզական վարժարանն ու պարավեստի քոլեջը:

Քննության առաջին փուլի արդյունքներով 12-ամյա կրթություն իրականացնող դպրոցների պետական ավարտական քննություններին «Հայոց լեզու և գրականություն» առարկայից մասնակցել է 146 ռազմավարտ: Արդյունքում՝ 0-7 միավոր - 0%, 18-20 միավոր - 4 աշակերտ: «Մաթեմատիկա» առարկայից մասնակցել է 202 աշակերտ, որից՝ 0-7 միավոր - 0%, 18-20 միավոր - 3 աշակերտ:

Միասնական քննություններին «Հայոց լեզու և գրականություն» առարկայից մասնակցել է 229 աշակերտ, որոնք ավարտական մասով ունեն հետևյալ պատկերը.

0-7 միավոր ստացել է 8 աշակերտ 18-20 միավոր - 42 աշակերտ:

«Մաթեմատիկա» առարկայից միասնական քննությանը մասնակցել է 175 աշակերտ, որոնք ավարտական մասով ունեն հետևյալ պատկերը.

0-7 միավոր ստացել է 4 աշակերտ 8-20 միավոր - 20 աշակերտ:

Հիմնականում «անբավարար» գնահատականներ են գրանցվել միասնական ավարտական մասով, իսկ դպրոցներում քննություններ հանձնողների գնահատականները, ինչպես 9-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանի, որտեղ ևս չեն ստացել «անբավարար» գնահատականները, որտեղ ևս չեն ստացել «անբավարար» գնահատականները:

Մայրաքաղաքի ռազմավարտները գիտելիքների որակական բարձր մակարդակ են ցուցաբերել՝ հավաքելով 18-20 միավոր:

Ըստ դպրոցների 18-20 միավոր ստացել են՝

հ. 3 միջնակարգ դպրոցի 33 ռազմավարտներից հայոց լեզվից՝ 3 ռազմավարտ, պատմությունից՝ 4, անգլերենից՝ 4, ռուսերենից՝ 1,

հ. 8 ավագ դպրոցի 37 ռազմավարտներից հայոց լեզվից՝ 16 ռազմավարտ, մաթեմատիկայից՝ 7, պատմությունից՝ 3, անգլերենի 34 մասնակիցներից՝ 9, ռուսերենի 30-ից՝ 3, կենսաբանությունից 7 ռազմավարտից՝ 1,

հ. 11 ավագ դպրոցի 109 ռազմավարտներից. հայոց լեզվից՝ 20, մաթեմատիկայից՝ 56-ից՝ 5 հոգի, պատմությունից՝ 27-ից՝ 5, կենսաբանությունից՝ 12-ից՝ 4, քիմիայից՝ 8-ից՝ 2, անգլերենից՝ 56-ից՝ 24, ռուսերենից՝ 44-ից՝ 1,

ֆիզմաթ դպրոցի 31 ռազմավարտներից հայոց լեզվից՝ 8, մաթեմատիկայից՝ 42-ից՝ 9, ֆիզիկայից՝ 12-ից՝ 6, անգլերենից՝ 28-ից՝ 10, ռուսերենից՝ 2:

Ցավալի է, որ ռազմամարզական վարժարանի 25 ռազմավարտներից և պարավեստի քոլեջի 3 ռազմավարտներից ոչ ոք չի հաջողվել արձանագրել բարձր միավորներ:

Մի քանի խոսք առարկայական օլիմպիադաների արդյունքների մասին, որպես այս կամ այն առարկայից առանձնակի հակումներ ունեցող աշակերտների հետ տարվող աշխատանքների:

Ներդրողական փուլում հաղթող ճանաչված 353 աշակերտ մասնակցել է քաղաքային փուլին, որոնցից 89-ը /25%/ /նախորդ ուստարում 59-ը/ գրավել է մրցանակային տեղեր. 11-ը՝ 1-ին, 32-ը՝ 2-րդ, 46-ը՝ 3-րդ, իսկ 61-ը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն:

Անցյալ տարվա համեմատությամբ՝ արդյունքները գոհացուցիչ են, այնուամենայնիվ, խորհելու առիթ է տալիս այն փաստը, որ օլիմպիադային 353 մասնակցից 58 /16,4%/ հոգի չի կարողացել հաղթահարել նվազագույն շեմային միավորը:

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է անգլերեն, պատմություն, հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն, նախնական գիմնական պատրաստություն առարկաներից: Ընդհանուր առմամբ՝ I - III մրցանակային տեղերն աճել են: Մրցանակային տեղ չունեցանք քիմիա, կենսաբանություն և ինֆորմատիկա առարկաներից: Ի դեպ, նշենք, որ քիմիա առարկայից մրցանակային տեղ չենք ունեցել 2010-2011, 2012-2013, 2013-2014 ուստարիներին ևս:

Ընդհանրապես, հանրապետությունում քաղաքային թիմը մրցանակային տեղերի քանակի առումով առաջին տեղում է /33 մրցանակային տեղ՝ 25,8%/:

Հայոց լեզու առարկայից 9 մրցանակային տեղերից 2-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի մասնակիցներին:

Հայ գրականություն առարկայից 5 մրցանակային տեղերից 1-ը՝ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի մասնակցին:

Պատմություն առարկայի 4 մրցանակային տեղերից մեկական զբաղեցրին Ստեփանակերտի հ.8 և հ.11 ավագ դպրոցների մերկայացուցիչները:

Մաթեմատիկա և ֆիզիկա առարկաների մրցանակային 6 տեղերն էլ զբաղեցրին ֆիզմաթ դպրոցի սաները:

Կենսաբանություն առարկայի 3 մրցանակային տեղերից 1-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցին:

Հայոց լեզուից 7 մրցանակային տեղերից 1-ը՝ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցից:

ՆՁՊ առարկայի 14 մրցանակային տեղերից 4-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի սաներին:

Ըստ դպրոցների պատկերը հետևյալն է՝

հ. 8 ավագ դպրոց - 2 մրցանակային տեղ, 4 ակտիվ մասնակցություն, հ.11 ավագ դպրոց - 16 մրցանակային տեղ, 10 ակտիվ մասնակցություն,

հ. 3 միջնակարգ դպրոց - 4 մրցանակային տեղ, 3 ակտիվ մասնակցություն:

Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոց - 6 մրցանակային տեղ, 4 ակտիվ մասնակցություն:

Համեմատություն անցկացնելով դպրոցների միջև՝ հանդիպում ենք նաև անհանգստացնող այսպիսի փաստերի. 12 դպրոցներից հ.4, հ.9 և հ.12 դպրոցներից օլիմպիադայի քաղաքային փուլին ոչ մի աշակերտ չի ընդգրկվել, իսկ հ. 2 հիմնական դպրոցից մասնակցել է 4 աշակերտ միայն ֆրանսերենից, հ.3 միջնակարգ դպրոցից մասնակցել է 10 աշակերտ, որից 9-ը՝ ռուսաց լեզու առարկայից, 1 աշակերտ՝ անգլերենից, հ.5 հիմնական դպրոցը միայն ՆՁՊ առարկայից է ունեցել մասնակից՝ 2 հոգի:

Օլիմպիադայի քաղաքային և հանրապետական փուլերի արդյունքների ամփոփումից հետո մրցանակային տեղեր գրաված աշակերտների շարքում հաճելիորեն նկատում ենք մեր այն լավագույն աշակերտների անունները, ովքեր 2-րդ և նույնիսկ 3-րդ տարիքն է գրավում են մրցանակային տեղեր:

Այսպես, հ. 11 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Մանե Սարգսյանը հայոց լեզու առարկայից, 11-րդ դասարանի աշակերտուհի Աննա Արզումանյանը՝ անգլերեն և հայոց լեզու առարկաներից, 11-րդ դասարանի աշակերտուհի Ֆլորա Յայրապետյանը՝ անգլերենից, Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արման Ասրյանը՝ պատմություն առարկայից, Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնակցից 10-րդ դասարանի աշակերտ Սամվել Սաֆարյանը և 11-րդ դասարանի աշակերտ Դավիթ Հարությունյանը՝ մաթեմատիկա առարկայից, 11-րդ դասարանի աշակերտ Արզեյ Յայրապետյանը՝ ֆիզիկա առարկայից, Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Ներսեսյանը՝ ռուսաց լեզու առարկայից:

Այս աշակերտների ձեռք բերած հաջողությունների գործում իրենց արժանի ներդրումն ունեն ուսուցիչներ Ջոյա Մարտիրոսյանը և Գոհար Աղանյանը /հ. 3/, Իրա Մարինյանը, Արմենուհի Խանուսյանը, Հասմիկ Սերյանյանը, Նարիա Սերյանյանը, Արմեն Դուլիսյանյանը /հ. 11/, Սուսաննա Ներսիսյանը, Աշոտ Ապրեսյանը, Ծովինար Բեգարյանը /ֆ/մ/, Արսեն Հարությունյանը /հ. 5/ և Վարուժան Աղաջանյանը՝ հ. 10 դպրոցներից:

Այս տարի նույնպես ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի կողմից առարկայական օլիմպիադայի 33 եզրափակիչ փուլում հաղթած և դիպլոմների ու գովասանագրերի արժանացած դպրոցականների և առաջին կարգի դիպլոմակիր աշակերտների ուսուցիչների համար պարգևատրման հանդիսավոր արարողություն տեղի ունեցավ:

Սա կրթության համակարգի նկատմամբ տարեցտարի աճող պետական հոգածության և ուշադրության հերթական վկայությունն է, որը կարծես թե ավանդական է դառնում: Աշակերտների և ուսուցիչների նման ձևով ընդունելությունը և խրախուսումը մղում է ավելի լավ գործունեության ու բարձր պատասխանատվության:

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի

նախագահ Գևորգ Գևորգյանի նախաձեռնությամբ և օգնությամբ կազմակերպվել է 2014-2015 ուստարում մայրաքաղաքի 15 ուսումնական հաստատություններից 6-ում է իրականացվում 12-ամյա կրթություն: Դրանք են՝ հ.8, 11 ավագ, հ.3 միջնակարգ և ֆիզմաթ հատուկ դպրոցները, ռազմամարզական վարժարանն ու պարավեստի քոլեջը:

Քննության առաջին փուլի արդյունքներով 12-ամյա կրթություն իրականացնող դպրոցների պետական ավարտական քննություններին «Հայոց լեզու և գրականություն» առարկայից մասնակցել է 146 ռազմավարտ: Արդյունքում՝ 0-7 միավոր - 0%, 18-20 միավոր - 4 աշակերտ:

«Մաթեմատիկա» առարկայից մասնակցել է 202 աշակերտ, որից՝ 0-7 միավոր - 0%, 18-20 միավոր - 3 աշակերտ:

Միասնական քննություններին «Հայոց լեզու և գրականություն» առարկայից մասնակցել է 229 աշակերտ, որոնք ավարտական մասով ունեն հետևյալ պատկերը.

0-7 միավոր ստացել է 8 աշակերտ 18-20 միավոր - 42 աշակերտ:

«Մաթեմատիկա» առարկայից միասնական քննությանը մասնակցել է 175 աշակերտ, որոնք ավարտական մասով ունեն հետևյալ պատկերը.

0-7 միավոր ստացել է 4 աշակերտ 8-20 միավոր - 20 աշակերտ:

Հիմնականում «անբավարար» գնահատականներ են գրանցվել միասնական ավարտական մասով, իսկ դպրոցներում քննություններ հանձնողների գնահատականները, ինչպես 9-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանի, որտեղ ևս չեն ստացել «անբավարար» գնահատականները, որտեղ ևս չեն ստացել «անբավարար» գնահատականները:

Մայրաքաղաքի ռազմավարտները գիտելիքների որակական բարձր մակարդակ են ցուցաբերել՝ հավաքելով 18-20 միավոր:

Ըստ դպրոցների 18-20 միավոր ստացել են՝

հ. 3 միջնակարգ դպրոցի 33 ռազմավարտներից հայոց լեզվից՝ 3 ռազմավարտ, պատմությունից՝ 4, անգլերենից՝ 4, ռուսերենից՝ 1,

հ. 8 ավագ դպրոցի 37 ռազմավարտներից հայոց լեզվից՝ 16 ռազմավարտ, մաթեմատիկայից՝ 7, պատմությունից՝ 3, անգլերենի 34 մասնակիցներից՝ 9, ռուսերենի 30-ից՝ 3, կենսաբանությունից 7 ռազմավարտից՝ 1,

հ. 11 ավագ դպրոցի 109 ռազմավարտներից. հայոց լեզվից՝ 20, մաթեմատիկայից՝ 56-ից՝ 5 հոգի, պատմությունից՝ 27-ից՝ 5, կենսաբանությունից՝ 12-ից՝ 4, քիմիայից՝ 8-ից՝ 2, անգլերենից՝ 56-ից՝ 24, ռուսերենից՝ 44-ից՝ 1,

ֆիզմաթ դպրոցի 31 ռազմավարտներից հայոց լեզվից՝ 8, մաթեմատիկայից՝ 42-ից՝ 9, ֆիզիկայից՝ 12-ից՝ 6, անգլերենից՝ 28-ից՝ 10, ռուսերենից՝ 2:

Ցավալի է, որ ռազմամարզական վարժարանի 25 ռազմավարտներից և պարավեստի քոլեջի 3 ռազմավարտներից ոչ ոք չի հաջողվել արձանագրել բարձր միավորներ:

Մի քանի խոսք առարկայական օլիմպիադաների արդյունքների մասին, որպես այս կամ այն առարկայից առանձնակի հակումներ ունեցող աշակերտների հետ տարվող աշխատանքների:

Ներդրողական փուլում հաղթող ճանաչված 353 աշակերտ մասնակցել է քաղաքային փուլին, որոնցից 89-ը /25%/ /նախորդ ուստարում 59-ը/ գրավել է մրցանակային տեղեր. 11-ը՝ 1-ին, 32-ը՝ 2-րդ, 46-ը՝ 3-րդ, իսկ 61-ը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն:

Անցյալ տարվա համեմատությամբ՝ արդյունքները գոհացուցիչ են, այնուամենայնիվ, խորհելու առիթ է տալիս այն փաստը, որ օլիմպիադային 353 մասնակցից 58 /16,4%/ հոգի չի կարողացել հաղթահարել նվազագույն շեմային միավորը:

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է անգլերեն, պատմություն, հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն, նախնական գիմնական պատրաստություն առարկաներից: Ընդհանուր առմամբ՝ I - III մրցանակային տեղերն աճել են: Մրցանակային տեղ չունեցանք քիմիա, կենսաբանություն և ինֆորմատիկա առարկաներից: Ի դեպ, նշենք, որ քիմիա առարկայից մրցանակային տեղ չենք ունեցել 2010-2011, 2012-2013, 2013-2014 ուստարիներին ևս:

Ընդհանրապես, հանրապետությունում քաղաքային թիմը մրցանակային տեղերի քանակի առումով առաջին տեղում է /33 մրցանակային տեղ՝ 25,8%/:

Հայոց լեզու առարկայից 9 մրցանակային տեղերից 2-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի մասնակիցներին:

Հայ գրականություն առարկայից 5 մրցանակային տեղերից 1-ը՝ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի մասնակցին:

Պատմություն առարկայի 4 մրցանակային տեղերից մեկական զբաղեցրին Ստեփանակերտի հ.8 և հ.11 ավագ դպրոցների մերկայացուցիչները:

Մաթեմատիկա և ֆիզիկա առարկաների մրցանակային 6 տեղերն էլ զբաղեցրին ֆիզմաթ դպրոցի սաները:

Կենսաբանություն առարկայի 3 մրցանակային տեղերից 1-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցին:

Հայոց լեզուից 7 մրցանակային տեղերից 1-ը՝ Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցից:

ՆՁՊ առարկայի 14 մրցանակային տեղերից 4-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի սաներին:

Ըստ դպրոցների պատկերը հետևյալն է՝

հ. 8 ավագ դպրոց - 2 մրցանակային տեղ, 4 ակտիվ մասնակցություն, հ.11 ավագ դպրոց - 16 մրցանակային տեղ, 10 ակտիվ մասնակցություն,

հ. 3 միջնակարգ դպրոց - 4 մրցանակային տեղ, 3 ակտիվ մասնակցություն:

Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոց - 6 մրցանակային տեղ, 4 ակտիվ մասնակցություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՒԹՅԱՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՄ 2015-2016 ՈՒՍԱՐՈՒՄ

Մայրաքաղաքի դպրոցականները հաջողություններ են ձեռք բերել նաև «Ռուսական արջուկ», «Կենդանուկ» և «Մեղուկ» միջազգային մրցույթներում:

Ի մի բերելով առարկայական օլիմպիադաների, տեսչության կողմից անցկացված թեմատիկ և համընդհանուր ստուգումների, տրված փորձնական քննությունների, ստուգողական գրավոր աշխատանքների, ինչպես նաև ավարտական և միասնական ու պետական ավարտական քննությունների արդյունքները՝ հաստատվում է ցավալի մի միտում. դեռևս շարունակվում է աշակերտների գիտելիքների արհեստական բարձրացումը, որը խոչընդոտում է գիտելիքների հիմունքների նկատմամբ սովորողների մրցակցությանը, ցածրացնում ուսման որակը, բացասաբար անդրադառնում ուսուցիչ անհատի հեղինակության վրա: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ամենօրյա դասին ներկայանա պատրաստ, զբաղվի իր մասնագիտական և մեթոդական նվազագույն բարձրացման հարցերով, գերծ մնա դպրոցական ուսուցչին ոչ վայել արարքից ու աշակերտին զնահատի ըստ փաստացի գիտելիքների. դրանով հարգած կլինի և՛ աշակերտին, և՛ բարձրացած կլինի իր իսկ հեղինակությունը:

Նախորդ ուսումնականից դպրոցներում գործում էր «Dasaran.am» միջդպրոցական ինտերակտիվ ցանցը, որի նպատակն է հանրակրթական դպրոցների արդիականացման և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով նպաստել որակյալ կրթության ապահովմանն ու ամրապնդմանը, բարձրացնել դպրոցների գործունեության և կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը, ձևավորել աշակերտների, ծնողների և ուսուցիչների հաղորդակցման ժամանակակից և արդյունավետ համակարգ:

Այս կայքը հնարավորություն է տալիս իրականացնել դպրոցի գործունեության արդյունավետ վերահսկողությունը, կիսամյակի վերջում ստանալ բոլոր աշակերտների միջին զննատարածությունները, արագ և արդյունավետորեն հաղորդակցվել ծնողների հետ: Հարկ է նշել, որ հ.2 և հ.5 հիմնական դպրոցների լավ աշխատանքն այս բնագավառում, և պարտավորեցնել մյուս դպրոցների տնօրինություններին՝ աշխատանքների կազմակերպման գործում ցուցաբերել նոր ու պատասխանատու վերաբերմունք:

Ուսումնական տարվան ատեստավորվել է վերապատրաստում անցած 78 ուսուցիչ, որոնք համապատասխանել են իրենց զբաղեցրած պաշտոնին: Հուսանք, որ ատեստավորված ուսուցիչները կցուցաբերեն ավելի ակտիվ դիրքորոշում և համարձակություն՝ տարակարգ ստանալու հարցում:

Կարևորելով դասալսումների դերը թե՛ ներդրողական վերահսկողության և թե՛ ուսուցիչներին մեթոդամանկավարժական օգնություն ցուցաբերելու գործում՝ ուսումնական տարվա ընթացքում մայրաքաղաքի դպրոցների տնօրինությունների կողմից սկսվել է 6761 դասաժամ, որից ստորեմների՝ 2196, փոխտնօրենների՝ 3838, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենների տեղակալների՝ 727 դասաժամ և կազմակերպվել դրանց քննարկումներն ու տրվել անհրաժեշտ մեթոդական ցուցումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ԿԳ նախարարության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգման են ենթարկվել մայր-

րաքաղաքի հ.2, հիմնական և հ.8 ավագ դպրոցները:

Կատարված համակողմանի ստուգումների արդյունքները քննարկվել են տեղերում, կատարվել համապատասխան առաջարկություններ և տրվել հանձնարարականներ՝ ցուցաբերվելով նաև համապատասխան մեթոդական օգնություն:

Ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական հաստատություններում գործել են 89 (որից 15-ը՝ քաղաքային) առարկայական մեթոդավորումներ, որոնց կողմից կատարվել է 835 ժամ դասալսում, կազմակերպվել քաղաքային 21 բաց դաս և 28 տարաբնույթ միջոցառումներ:

Քաղաքային առարկայական մեթոդավորման նախագահների կողմից ժամանակին հրավիրվել են մեթոդավորման միատեր, լավել տեսական և մեթոդական բազմաբնույթ զեկուցումներ, կատարվել քննարկումներ, ցուցաբերել մեթոդական օգնություն:

Կազմակերպված քաղաքային բաց դասերից ուսանելի և ընդօրինակելի դասեր էին՝

- հ.1 հիմնական դպրոց - մաթեմատիկա /Կարինե Սարգսյան/,
- հ.2 հիմնական դպրոց - աշխարհագրություն /Լուսինե Արզանգուլյան/,
- հ.3 միջնակարգ դպրոց - ռուսաց լեզու /Անժելա Բարսեղյան/,
- հ.4 հիմնական դպրոց - հայոց լեզու /Նորա Թամրազյան/,
- հ.4 հիմնական դպրոց - կերպարվեստ /Լիլիթ Պետրոսյան/,
- հ.7 հիմնական դպրոց - դասավորումներ Անահիտ Գրիգորյան, Գայանե Հայրապետյան, Անժելա Պետրոսյան, Ռեգինա Ադամյան,
- հ.8 ավագ դպրոց - անգլերեն /Էլլադա Խաչատրյան/,
- հ.9 հիմնական դպրոց - ֆրանսերեն /Դավիթ Գաբրիելյան/,
- հ.10 հիմնական դպրոց - քիմիա /Սուսաննա Մարության/,
- հ.11 ավագ դպրոց - անգլերեն /Անժելա Բարսեղյան/:

Դաս - միջոցառումներ՝
հ.2 հիմնական դպրոցից աշխարհագրությունից Լուսինե Արզանգուլյանի «Պատանի աշխարհագետ» խմբակի աշակերտների մասնակցությամբ,

հ.7 հիմնական դպրոցից՝ դասավորումներ Սաֆարյանի վարած դասերը:

Հայրենասիրական թեմայով և Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ են կազմակերպվել մայրաքաղաքի հանրակրթական բոլոր դպրոցներում: Առանձնահատուկ էին հ.3 դպրոցի կողմից կազմակերպված «միջոցառումը»՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ և հ.1 դպրոցի կողմից՝ նվիրված Հայոց բանակի 23-րդ տարեդարձին: Բազմաբնույթ և հետաքրքիր միջոցառումներ են կազմակերպել դպրոցներում գործող նախադպրոցական խմբերը: Դրանցից են Անանորին և Սուրբ Ջատկին նվիրված քաղաքային միջոցառումները:

Ապրիլի 27-ին Ստեփանակերտի հ. 2, 11 և ֆիզմաթ դպրոցներից 3 թիմ ներկայացան «Էկոտուր» միջազգային 5-րդ ստուգատեսին և արժանացան խրախուսական մրցանակի՝ ստանալով «Ձիկատար» միջազգային ճամբարում հանգստանալու ուղեգիր:

Ուրախալի է նշել, որ վերջին տարիներին կրթության բաժինը և դպրոցները հասարակական կազմակերպությունների հետ ավելի համագործակցած են աշխատում, քան երբևէ, որի շնորհիվ բազմաբնույթ են դարձել համատեղ համոզականները, միջոցառումները և նրանց կողմից մեր դպրոց-

ցականներին խրախուսելը:

Դրա վառ ապացույցն է Արցախյան շարժման 25-ամյակին և Մայիսյան եռատոնին նվիրված՝ բաժնի և ԼՂՀ առհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախաձեռնությամբ «Հայրենիք և բանակ» թեմայով դպրոցականների և զինվորների շրջանում կազմակերպված ստեղծագործական շարադրությունների մրցույթը, որի հաղթողները և ակտիվ մասնակիցները խրախուսվել են պատվոգրերով ու հուշանվերներով:

Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման, հայագիտական գիտելիքների հարստացման ու գեղագիտական ճաշակի զարգացման նպատակով կազմակերպվել են ստեղծագործական շարադրությունների և ասունքի մրցույթներ՝ նվիրված ԼՂՀ հռչակման 23-ամյակին, Արցախյան շարժման 26-ամյակին, Ստեփանակերտի օրվան, հայ մեծանուն գրողներ Յովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին և Մայիսյան եռատոնին: Նշված մրցույթների բոլոր փուլերին էլ ակտիվորեն են մասնակցել և մրցանակային տեղեր զբաղեցրել մայրաքաղաքի դպրոցականները՝ պարզատրվելով բաժնի, քաղաքապետարանի, ԼՂՀ կրթության և գիտության, Պաշտպանության նախարարությունների, կառավարության պատվոգրերով, ինչպես նաև՝ խրախուսվել հուշանվերներով:

Քաղաքապետ Սուրեն Գրիգորյանի աջակցությամբ ճանաչողական նպատակով ուսուցիչների և աշակերտների համար կազմակերպվել են էքսկուրսիաներ՝ քաղաքամայր Երևան, առանձնակի էր Երևանի և Ստեփանակերտի քաղաքապետարանների համագործակցության և բարեկամության շրջանակներում մայիսի 25-ին կազմակերպված էքսկուրսիան քաղաքային 10 հիմնական դպրոցներից մեկական ուսուցիչների և աշակերտների համար: Վերջիններս հյուրընկալվել են Երևանի տարբեր դպրոցներում և արժանացել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի ընդունելությանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնին ուշադրության կենտրոնում է պահել սովորողների ֆիզիկական դաստիարակության, նրանց շրջանում սպորտի և ռազմամարզական խաղերի հետազոտ առավել մասսայականացման հարցերը: Այդ իսկ նպատակով կազմակերպվել ու անց են կացվել քաղաքային տարաբնույթ առաջնություններ և մրցույթներ. նախագրականային տարիքի դպրոցականների թեթևատետիկական հնգամարտ, 11-րդ դասարանների տղամանիկ միջև ԱԿ-74 ինքնաձիգի հրաձգության առաջնություն, «Ուժային եռամարտ», «Արծվիկ» ռազմամարզական խաղ-մրցույթներ, «Ուրախ մեկնարկներ», Հայրենիքի պաշտպանի օրվան նվիրված «Ռազմականացված կրոսավազ», ինչպես նաև ապահովվել մեր թիմերի մասնակցությունը ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկությանը, աղջիկների և պատանիների վոլեյբոլի, շախմատի, բասկետբոլի և հանդբոլի առաջնություններին, որտեղ մեր աշակերտներն անհատական և թիմային ձևով հանդես են եկել հաջողությամբ՝ գրավելով մրցանակային տեղեր:

Առարկայական խոր պատրաստվածություն ունեցող, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին բացահայտելու, նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը տարածելու, հասարակության մեջ ուսուցիչ անհա-

տի հեղինակության բարձրացման նպատակով կազմակերպվել ու անց են կացվել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթները, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել հ. 2 դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը, հ.11 ավագ դպրոցի ուսուցիչներ Մանուշ Բալայանը և Արմեն Դուլիսյանը, հ.2 մանկապարտեզի դաստիարակ Ռամելա Իսախանյանը և ներկայացվել մրցույթի հանրապետական փուլին:

«Լավագույն մանկավարժական փորձ» մրցույթում առանձին անվանակարգով հաղթող են ճանաչվել հ.2 հիմնական դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Լուսինե Արզանգուլյանը և հ. 10 հիմնական դպրոցի երգ-երաժշտության ուսուցչուհի Լեսանյա Համբարձումյանը:

Կազմակերպվել ու անց է կացվել «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթը, որտեղ հաղթող է ճանաչվել հ.8 դպրոցի աշակերտուհի Անահիտ Պողոսյանը:

Արտադպրոցական աշխատանքների կազմակերպման լավագույն օջախ է ՄՊՍԿ-ն, որտեղ ավելի քան 1250 դպրոցականներ դասերից հետո մեծ սիրով ու հաճույքով են հաճախել շուրջ 100 տարբեր խմբակներ: Արտադպրոցական այս հաստատությունն ստեղծագործ աշխատանքով իր համբավն է տարածել նույնիսկ հանրապետությունից դուրս և տարեցտարի նորանոր ձեռքբերումներ է ունենում՝ ավելացնելով նորանոր խմբակների պահանջարկը:

Կազմակերպված է անցել դպրոցականների ամառային հանգիստը: 10-րդ դասարանի տղաներն իրենց ամառային հանգիստն են անցկացրել Այգետանի «Ասպետ» ճամբարում. այստեղ ուսումնական տարվա ընթացքում լուրջ անելիքներ ունեն դպրոցների զինղեկներն ու տնօրինությունները, և այս ուղղությամբ անելիքները շատ են հ.11 դպրոցում: Մայրաքաղաքի շուրջ 450 դպրոցականներ իրենց առօրյան հետաքրքիր են դարձրել հ. 5 և հ. 10 հիմնական դպրոցներին կից բացված «Լուսաբաց» և «Արևիկ» ճամբարներում: Ձեռնված, հաշմանդան զինծառայողների, ծնողագույրի և ասկավ ապահովված ընտանիքների դպրոցահասակ 46 երեխաների համար ամառային հանգիստը կազմակերպվեց Հանքավանի «Հասնիկ» մանկական առողջարարարան, Գեղարքունիքի մարզում ՀՀ «Երկրապահ» միության կողմից կազմակերպված ճամբարում, իսկ 158 աշակերտ մասնակցել է «Հայկի Սերունդ» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված Շուշիի վրանային ճամբարին: Դպրոցների և արտադպրոցական հիմնարկների կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումները, խմբակային աշխատանքները հետապնդում են մի նպատակ՝ սովորողներին տալ ճիշտ և հայեցի դաստիարակություն, ինչպես նաև ապահովել նրանց օրվա երկրորդ մասի առավել հետաքրքիր ու բովանդակալից կազմակերպումը:

Բաժնի կողմից լուրջ ուշադրություն է դարձվում նաև նախադպրոցական հիմնարկներին: Արդյունքում որոշակիորեն հարստացվել է նրանց ուսումնամոթական բազան, բարելավվել ուսումնադաստիարակական գործընթացը, բարենպաստ պայմաններ ստեղծվել երեխաների ազատ ժամանցի, ակտիվ և պասիվ հանգստի կազմակերպման համար: Մանկապարտեզներում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների առողջության

պահպանմանը: Տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, բաց պարասպորտներ, համերգներ, ցերեկույթներ. առանձնահատուկ էին դպրոցների նախադպրոցական խմբերի դաստիարակների համար կազմակերպված բաց պարասպորտները հ.3 մանկապարտեզում:

Անցած ուստարին մայրաքաղաքի կրթության համակարգի համար նշանակալի էր նրանով, որ ավարտին են հասցվել և նոր ուսումնականը նորակառույց շենքերում են սկսել հ.1 և հ.6 դպրոցները, հիմնանորոգվել հ.9 հիմնական դպրոցը:

Այս ուսումնականում բացվել են հ.4՝ 1-խմբանոց մանկապարտեզը, մոտ օրերս էլ իր դռները կբացի 3-խմբանոց հ.5 մանկապարտեզը: Ավարտին է մոտենում ևս մեկ՝ Բաղրամյան փողոցում հ.4 հիմնական դպրոցի հարևանությամբ գտնվող մեկ մանկապարտեզի շենքի շինարարությունը՝ 2 խմբի համար:

Վերանորոգման աշխատանքներ են տարվել գրեթե բոլոր դպրոցներում: Բայց համակարգի համար շարունակում է հրատապ մնալ հ.10 հիմնական դպրոցի շենքի հիմնարար նորոգման հարցը:

Համալրվել է դպրոցների ուսումնամոթական բազան. ձեռք բերվել դպրոցական անհրաժեշտ կահույք, հակահողեխային միջոցներ, տեխնիկական և սպորտային պարագաներ, տարածքներում կառուցվել են տաղավարներ և այլն:

Ստացվել ու առաքվել են մեթոդական գրականություն ու ուսումնաօժանդակ նյութեր:

Առավել ուրախալի փաստ է, որ, առաջին դասարան են ընդունվել 1012 երեխաներ, ցուցանիշ, որը 1994-95 ուստարուց առաջսօր չի գրանցվել:

Նոր՝ 2015-2016 ուստարվա սկիզբը զուգադիպում է մեզ համար անչափ կարևոր ժամանակաշրջանի՝ ԼՂՀ հռչակման 24-րդ տարեդարձին, անկախություն, որը ձեռք է բերվել ուսուցիչների դաստիարակության քուրայով անցած հազարավոր նվիրյալների արյան գնով, մի պետություն, որի հետագա հզորացման և ճանաչման համար պատասխանատու է յուրաքանչյուր արցալիցի ու, առավել ևս, ամեն մի ստավորական:

Այսօր քան երբևէ՝ հրատապ պահանջ է, որ դպրոցի շենքն ոտք դնող ամեն մի մանկավարժ իր սաներին հմայի անձնական օրինակով: Դա առաջին հերթին նշանակում է, որ ուսուցիչն անխոցելի պետք է լինի իր բարոյական նկարագրով, վարվեցողության կուլտուրայով, մանկավարժական տակտով, գաղափարական համոզվածությամբ: Իսկ ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է բոլորանվեր սիրահարված ու նվիրված լինենք մեր գործին:

Համոզված ենք, որ մեր փորձառու մանկավարժները, համակարգի պատասխանատու աշխատողները, ի մի բերելով տարիների լավագույնն ու սեփական փորձը, 2015-2016 ուստարում կշարունակեն ուշադրության կենտրոնում պահել ժամանակակից դպրոցի բարեփոխման ու վերակառուցման, նրա կառավարման, ուսումնադաստիարակական գործընթացի կատարելագործման հետ կապված հիմնահարցերը:

Կ. ՄԱՐԿԱՐՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության եւ սպորտի բաժնի վարիչ

